COMMISSIONER FOR HUMAN RIGHTS

COMMISSAIRE AUX DROITS DE L'HOMME

COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ Եվրոպայի խորհուրդ

Ստրասբուրգ, 9-ը մայիսի, 2011թ. CommDH(2011)12

Բնօրինակը՝ անգլերեն

---

# Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համարբերգի

# ԶԵԿՈՒՅՑԸ

## 2011 թվականի հունվարի 18-ից 21-ը նրա Հայաստան կատարած այցից հետո

---

Ուսումնասիրված հիմնախնդիրները.

Մարդու իրավունքների հիմնախնդիրները 2008 թվականի մարտի իրադարձությունների առնչությամբ, արտահայտվելու ազատությունը և հավաքների ու միավորումների ազատությունը, մարդու իրավունքների իրավիճակը բանակում

## Ամփոփում

Հանձնակատար Թոմաս Համարբերգը 2011 թվականի հունվարի 18-ից 21-ն այցելեց Հայաստան և մարդու իրավունքների իրավիճակի շուրջ քննարկումներ ունեցավ երկրի իշխանությունների և այլ զրուցակիցների, ներառյալ՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ։

Սույն զեկույցն անդրադառնում է հետևյալ կարևորագույն հիմնախնդիրներին.

**I. Մարդու իրավունքների հիմնախնդիրները 2008 թվականի մարտի իրադարձությունների առնչությամբ:** 2008 թվականի փետրվարին տեղի ունեցած նախագահական ընտրություններին հաջորդեցին բողոքի լայնածավալ գործողություններ։ Բռնի առճակատում տեղի ունեցավ Երևանում 2008 թվականի մարտի 1-ին և 2-ին, որի հետևանքով զոհվեցին տաս և մարմնական վնասվածք ստացան ավելի քան 130 անձինք։ Իրադարձությունների հետևանքով Մարդու իրավունքների հանձնակատարը երեք անգամ այցելեց Հայաստան՝ 2008 թվականի մարտին, հուլիսին և նոյեմբերին։

2008 թվականի մարտի իրադարձությունների համատեքստում ձերբակալվեց ավելի քան հարյուր հոգի, ովքեր գրեթե բոլորն ընդդիմության անդամներ էին, և շատերը ենթարկվեցին քրեական հետապնդման։ Հայաստանի քրեական օրենսգրքի փոփոխությունների և Հայաստանի Ազգային ժողովի կողմից 2009 թվականի հունիսին ընդունված՝ համաներման մասին որոշման իրագործման արդյունքում ազատ արձակվեց 2008 թվականի մարտի իրադարձությունների կապակցությամբ ազատազրկված անձանց մեծամասնությունը։ Կալանավորվածներից ոմանք ազատ արձակվեցին 2010 թվականի երկրորդ կեսին, ոմանք էլ՝ 2011 թվականի մարտին։ Հանձնակատարը Հայաստանի իշխանությունների հետ մանրամասնորեն քննարկեց ընդդիմության դեռևս ազատազրկման մեջ մնացող ակտիվիստներին ազատ արձակելու հնարավորությունները։

ԵԱՀԿ-ի Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի («ԺՀՄԻԳ») Դատավարությունների դիտարկման զեկույցում, որը վերաբերում էր 2008 թվականի ապրիլից մինչև 2009 թվականի հուլիս ընկած ժամանակահատվածին, մատնանշվեցին 2008 թվականի մարտի իրադարձություններին առնչվող դատավարությունների անցկացման հետ կապված տարաբնույթ թերություններ։ Դրանցից էին, մասնավորապես, բողոքներն այն մասին, թե իրավապահ մարմինների աշխատակիցները դաժան վերաբերմունքի միջոցով հարկադրել են անձանց՝ ցուցմունքներ տալու մարտի իրադարձությունների կապակցությամբ մեղադրվող ընդդիմադիր գործիչների դեմ։ ԺՀՄԻԳ-ի զեկույցի համաձայն, թե՛ դատախազները և թե՛ դատավորները, եզակի բացառություններով, լռությամբ էին արձագանքել իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից դաժան վերաբերմունքի մասին վկայող տեղեկություններին, իսկ դատարանները մեղադրական դատավճիռներ կայացնելիս հաճախ հենվել էին այնպիսի ապացույցների վրա, որոնք, արվող պնդումների համաձայն, ստացվել էին անօրինական ճանապարհով։

Միջազգային և ազգային դերակատարները տարբեր առիթներով լուրջ մտահոգություն են հայտնել մարտի իրադարձությունների ընթացքում տեղի ունեցած մահվան տաս դեպքերի քննության արդյունքների անբավարարության կապակցությամբ։ Մահացած տաս անձանցից մեկը (ոստիկան) մահացել է ձեռքի նռնակի պայթյունի հետևանքով, հինգը՝ հրազենից արձակված գնդակի պատճառած մարմնական վնասվածքներից, երեքը՝ «Չերյոմուխա-7» տեսակի գազային նռնակի պատճառած մարմնական վնասվածքներից, և մեկը՝ բութ առարկայով գլխին հասցված վնասվածքներից։ Քննությունը մինչ օրս չի հանգեցրել մահվան մեղավորների բացահայտմանը, և տպավորություն է

առաջանում, որ սույն համատեքստում լրջորեն չի ուսումնասիրվել հրամանատարների պատասխանատվության խնդիրը։ Հանձնակատարը հանդիպեց մահացածների ընտանիքների անդամներին, ովքեր լուրջ դժգոհություն արտահայտեցին քննության և դատական գործընթացների առնչությամբ։ Հանձնակատարը կոչ է անում Հայաստանի իշխանություններին՝ ավարտին հասցնելու մահվան տաս դեպքերի քննությունը և ձեռնարկելու համապատասխան միջոցառումներ բոլոր մեղավորներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ՝ արդյունավետ քննության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ամրագրված չափանիշներին համապատասխան։ Հույժ կարևոր է, որպեսզի հանրությունը տեղեկացված լինի քննության գործընթացին և արդյունքներին։

Հանձնակատարը տեղեկացավ 2008 թվականի մարտի իրադարձությունների հետաքննություն անցկացնելու լիազորությամբ օժտված ժամանակավոր խորհրդարանական հանձնաժողովի աշխատանքի մասին։ Հետաքննություն իրականացնող ժամանակավոր խորհրդարանական հանձնաժողովի զեկույցը հրապարակվել է 2009 թվականի սեպտեմբերին։ Հայաստանի իշխանությունները զեկույցում արված առաջարկություններն օգտագործել են որպես հիմք՝ 2008 թվականի մարտի իրադարձությունների հետևանքով բացահայտված համակարգային որոշակի թերությունների շտկմանն ուղղված բարեփոխումներ իրագործելու համար։ Հանձնակատարի հետ քննարկումներում իշխանությունները ծավալուն տեղեկություններ ներկայացրեցին ոստիկանության բարեփոխումների գործընթացի և Ազգային ժողովի պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի աշխատանքի մասին, որը պատասխանատու է Հետաքննություն իրականացնող ժամանակավոր խորհրդարանական հանձնաժողովի առաջարկությունների իրագործման մոնիթորինգի համար։

Հանձնակատարը գտնում է, որ անհրաժեշտ է անել ավելին 2008 թվականի մարտի իրադարձությունների՝ մարդու իրավունքներին առնչվող մնացած հետևանքները հաղթահարելու և հայաստանյան հասարակության վերքերն ամոքելու ուղղությամբ· վերջին հիսս շրջանում դեռևս պահպանվում է այն խորը տպավորությունը, թե արդարադատությունն ի կատար է ածվել ընտրողաբար։ Դա նշանակում է՝ թե համակարգային բարեփոխումներ, թե կոնկրետ քայլեր պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ։

**II. Հիմնարար ազատությունները։** Հանձնակատարն իր այցի ընթացքում առանձնակի ուշադրություն է դարձրել արտահայտվելու ազատությանը և լրատվամիջոցների ազատությանը։ Նա ողջունում է 2010 թվականի մայիսին քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունների միջոցով զրպարտության և վիրավորանքի ապաքրեականացումը։ Այնուհանդերձ, մտահոգություն է արտահայտվել Հայաստանի քաղաքացիական օրենսգրքում կատարված որոշակի փոփոխությունների կապակցությամբ, որոնցով քաղաքացիական հայցերի կարգով դրամական մեծ տուգանքներ են նախատեսվում վիրավորանքի և զրպարտության համար։ Մտահոգություն է հայտնվել նաև նշված հիմքով լրատվամիջոցների դեմ ներկայացվող հայցերի թվաքանակի աճի առնչությամբ։ Հանձնակատարը տեղյակ է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի փոփոխված տարբերակի քննարկումներին և առաջարկում է Հայաստանի իշխանություններին հաշվի առնել միջազգային փորձագետների մեկնաբանությունները և Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ղեկավարվող աշխատանքային խմբի ներկայացրած առաջարկները։ Ինչ վերաբերում է լրագրողների նկատմամբ հարձակումներին և սպառնալիքներին, ապա երկրի ղեկավարությանն անհրաժեշտ է հաստատակամորեն դատապարտել դրանք։ Նշված դեպքերի հետաքննությունը պետք է լինի անհապաղ և արդյունավետ։ Մեղավորները պետք է պատասխանատվության ենթարկվեն։

Տեսալսողական լրատվամիջոցների դաշտում բազմակարծությունն այնպիսի առողջ ժողովրդավարության հարգադրոշմն է, որում կարևորվում է արտահայտվելու ազատության սկզբունքը: Այս համատեքստում, Հանձնակատարն ափսոսանքով է հիշատակում այն փաստը, որ հեռարձակման արտոնագրերի վերջին մրցույթը չնպաստեց նշված սկզբունքի իրագործմանը: Հանձնակատարն ի գիտություն է ընդունում «Արմնյուզ»-ի և «Մելտեքս»-ի միջև մրցույթում Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի («ՀՌԱՀ») ներկայացրած հիմնավորումը: Հանձնակատարը գտնում է, որ հայտերը գնահատելու նպատակով կիրառված մեթոդաբանությունը խնդրահարույց է եղել և ազդել է մրցույթի արժանահավատության վրա:

Հանձնակատարը սատարում է հայաստանյան իշխանությունների ջանքերը՝ ուղղված մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համահունչ հավաքների ազատության վերաբերյալ իրավական դաշտում փոփոխություններ կատարելուն: Նա ընդգծում է, որ Վենետիկյան հանձնաժողովի և ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի առաջարկությունները պետք է ըստ պատշաճի արտացոլվեն օրենքի մեջ, և որ պետք է պատշաճ կերպով հաշվի առնել այս առնչությամբ քաղաքացիական հասարակության սուբյեկտների արտահայտած կարծիքները:

Խաղաղ հավաքների ազատության իրավունքի գործնական իրագործումը Հայաստանում շարունակում է մտահոգության տեղիք տալ Հանձնակատարին: Պետք է անհապաղ վերացնել խաղաղ հավաքների իրավունքի իրացման ապօրինի և անհամաչափ խոչընդոտները, ինչպիսիք են, օրինակ, մասնակիցների ահաբեկումը և ձերբակալումը, տրանսպորտային միջոցների աշխատանքի խոչընդոտումը և որոշակի վայրերում հավաքների անցկացման բացարձակ արգելքը: Հանձնակատարը նաև անընդունելի է համարում մարդու իրավունքների կազմակերպությունների՝ շինությունների ներսում անցկացվող հավաքների նկատմամբ սահմանափակումների կիրառությունը, որի մասին նշել են Հանձնակատարի զրուցակիցներից մի քանիսը:

Հանձնակատարն ի գիտություն է ընդունել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների արտահայտած մտահոգությունները կառավարության կողմից վերջին շրջանում արված առաջարկների, այդ թվում՝ իրավաբանական անձանց գործունեության օրինականությունը վերահսկող տեսչության ստեղծման առաջարկի վերաբերյալ, որը նրանց կարծիքով կարող է հանգեցնել իրենց գործունեության նկատմամբ անհամաչափ միջամտության: «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխությունների նախագծի որոշ դրույթներ իսկապես կարող են բացասաբար անդրադառնալ մարդու իրավունքների կազմակերպությունների անկախության և գործունեության վրա:

**III. Մարդու իրավունքների իրավիճակը բանակում:** Խիստ մտահոգիչ են Հայաստանի բանակում չարաշահումների վերաբերյալ ստացվող հաճախակի հայտարարությունները՝ սկսած կամայական կարգապահական պատիժների կիրառությունից, և վերջացրած դաժան վերաբերմունքի և արտականոնադրական հարաբերությունների տարբեր ձևերով, ներառյալ՝ անգամ ոչ մարտական գործողությունների ընթացքում արձանագրվող մահվան դեպքերը: Չնայած որ կարելի է քաջալերվել՝ տեսնելով, որ նշված հիմնախնդիրները ներկայումս հանրային բանավեճի առարկա են, և որ իշխանությունները դրանք լուծելու պատրաստակամություն են հայտնել, Հանձնակատարը նախկինի պես խորապես մտահոգված է նշված ծանր դեպքերի անարդյունավետ հետաքննության, մեղավորներին պատասխանատվության չենթարկելու, ինչպես նաև՝ հրամանատարական որոշ սպաների (ովքեր կամ ուղղակիորեն նշվում են մեղավորների շարքում, կամ՝ չեն արձագանքում չարաշահումներին) դերի վերաբերյալ ստացվող տեղեկություններով: Բազմաթիվ անելիքներ կան նմանօրինակ դեպքերի քննության նկատմամբ տուժողների և վերջիններիս ազգականների անվստահությունը փարատելու ուղղությամբ:

Խղճի հիման վրա զինվորական ծառայությանն առարկող և ազատազրկված անձանց հիմնախնդիրը, ովքեր բոլորը ներկայումս Եհովայի վկաների համայնքի անդամներ են, տարիներ շարունակ քննարկման առարկա է: Խղճի հիման վրա զինվորական ծառայությանն առարկողները չեն ցանկանում կատարել այլընտրանքային այնպիսի ծառայություն, որը վերահսկվում է բանակի կողմից: Հայաստանում դեռևս չկա զինվորական ծառայության այլընտրանք, որն իր բնույթով կարելի կլիներ իսկապես քաղաքացիական համարել: Հանձնակատարը խորապես այն համոզման է, որ խղճի հիման վրա զինվորական ծառայությանն առարկող անձինք չպետք է ազատազրկվեն, և կոչ է անում իշխանություններին՝ ներդնելու այլընտրանքային քաղաքացիական ծառայություն:

Հայաստանի զինված ուժերում մարդու իրավունքների իրավիճակը բարելավելու տարբերակներից է մարդու իրավունքների անկախ մոնիթորինգի դերի բարձրացումը, որը կանոնավոր կերպով և մանրամասնորեն կգնահատեր իրավիճակը և երկրի ղեկավարությանը կոնկրետ առաջարկություններ կներկայացներ մարդու իրավունքների խախտումների և ներպետական օրենսդրության և միջազգային չափանիշների չկատարման խնդիրները լուծելու վերաբերյալ:

**Ներածություն**

1. Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համարբերգը 2011 թվականի հունվարի 18-ից 21-ն այցելեց Հայաստան։ Այցի հիմնական նպատակն էր ուսումնասիրել Հայաստանում մարդու իրավունքների հետ կապված որոշակի հիմնախնդիրներ, այդ թվում՝ 2008 թվականի մարտի 1-ին և 2-ին տեղի ունեցած իրադարձություններից հետո մնացող հիմնախնդիրները, հիմնարար ազատությունները (արտահայտվելու, խաղաղ հավաքների և միավորումների ազատություններ) և իրավիճակը զինված ուժերում։ Այցի շրջանակներում Հանձնակատարը Երևանում հանդիպումներ ունեցավ իշխանությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և լրատվության ոլորտի մասնագետների հետ։ Երևանում հանձնակատար Համարբերգը մասնակցեց Անդրեյ Դ. Սախարովի հիշատակին նվիրված՝ «Տագնապ և հույս» խորագրով ցուցահանդեսի բացմանը։[1]

2. Երևանում Հանձնակատարը հանդիպեց Նախագահ Սերժ Սարգսյանին, պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին, արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանին, արդարադատության նախարար Հրայր Թովմասյանին, ոստիկանության պետի տեղակալ Արթուր Օսիկյանին, Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովում Հայաստանի պատվիրակության ղեկավար Դավիթ Հարությունյանին, գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանին, զինվորական դատախազ Գևորգ Կոստանյանին և Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահ Գրիգոր Ամալյանին։ Նա նաև քննարկումներ ունեցավ Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանի, ինչպես նաև՝ միջազգային հանրության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ։

3. Այցելության ընթացքում Հանձնակատարը եղավ Երևանում գտնվող Բանտարկյալների հիվանդանոցում, որտեղ զրուցեց Ազգային ժողովի նախկին պատգամավոր և ընդդիմության ակտիվիստ Սասուն Միքայելյանի հետ։ Նաև նաև եղավ Հայաստանի հյուսիս-արևմտյան Շիրակի մարզում գտնվող Արթիկի բանտում, որտեղ հանդիպեց ընդդիմության ակտիվիստներ Նիկոլ Փաշինյանին («*Հայկական ժամանակ*» օրաթերթի գլխավոր խմբագիր) և Հարություն Ուռուտյանին, ինչպես նաև՝ խղճի հիման վրա զինվորական ծառայությունն առարկող երեք անձանց, ովքեր Եհովայի վկայի համայնքի անդամներ են։

4. Հանձնակատարը հնարավորություն ունեցավ՝ հանդիպելու 2008 թվականի մարտի իրադարձությունների ընթացքում զոհվածների ազգականներին և ոչ մարտական պատահարների հետևանքով մահացած զինվորականների ծնողներին։ Նրա զրուցակիցների թվում կային նաև մարտի իրադարձությունների առնչությամբ բանտարկված՝ ընդդիմության ակտիվիստների ազգականներ։

5. Այցի շրջանակներում Հանձնակատարը հանդիպեց նաև նախկին Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին։

6. Հանձնակատարը ցանկանում է այցի կազմակերպման գործում ցուցաբերված արժեքավոր աջակցության համար շնորհակալություն հայտնել Հայաստանի իշխանություններին, մասնավորապես՝ արտաքին գործերի նախարարությանը (Երևան) և Եվրոպայի խորհրդում (Ստրասբուրգ) Հայաստանի մշտական ներկայացուցչությանը։

---

[1] Հայաստան կատարած այցի շրջանակներում Հանձնակատարին ուղեկցում էին Հանձնակատարի գրասենյակի տնօրենի տեղակալ Բոյանա Ուրումովան և Հանձնակատարի խորհրդական Քրիստին Մարդիրոսյանը։

7. Հանձնակատարն արգասաբեր երկխոսություն ծավալեց իշխանությունների, ինչպես նաև՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ՝ նպատակ հետապնդելով ավելի լավ հասկանալ մարդու իրավունքների իրավիճակը Հայաստանում և անդրադառնալ այդ իրավիճակին, մասնավորապես՝ դիտարկվող հիմնախնդիրների առնչությամբ: Հանձնակատարը ցանկանում է երախտագիտություն հայտնել բոլոր զրուցակիցներին հանդիպումներին մասնակցելու և իրենց իմացությունը և կարծիքները Հանձնակատարին ներկայացնելու համար: Հանձնակատարը ցանկանում է հատուկ իր երախտագիտությունը հայտնել հայաստանյան իշխանությունների բաց երկխոսության և համագործակցության, մասնավորապես՝ արդարադատության նախարարի, զինվորական դատախազի և ոստիկանության պետի տեղակալի հետ կառուցողական քննարկումների համար:

8. Սույն զեկույցում Հանձնակատարը դիտարկում է կարևորագույն հետևյալ հիմնախնդիրները․ մարդու իրավունքների հիմնախնդիրները 2008 թվականի մարտի իրադարձությունների առնչությամբ (I բաժին), հիմնարար ազատությունները (II բաժին) և մարդու իրավունքների իրավիճակը բանակում (III բաժին):

# I. Մարդու իրավունքների հիմնախնդիրները 2008 թվականի մարտի իրադարձությունների առնչությամբ

9. Հայաստանի 2008 թվականի փետրվարին տեղի ունեցած նախագահական ընտրություններն ուղեկցվեցին բողոքի լայնածավալ գործողություններով։ Երևանի Ազատության հրապարակում ընդդիմության ցուցարարների կազմակերպած վրանային ճամբարի՝ ոստիկանության կողմից 2008 թվականի մարտի 1-ին գրելուց հետո իրավիճակը սրվեց՝ գագաթնակետին հասնելով բռնի բախումների տեսքով, որոնց հետևանքով զոհվեցին տաս և մարմնական վնասվածք ստացան ավելի քան 130 անձինք։ 2008 թվականի մարտի իրադարձությունների համատեքստում ձերբակալվեց ավելի քան հարյուր հոգի, ովքեր գրեթե բոլորն ընդդիմությանը սատարողներ էին, և շատերի նկատմամբ հարուցվեցին քրեական գործեր։

10. Վերոհիշյալ իրադարձությունների հետևանքով Մարդու իրավունքների հանձնակատարը («Հանձնակատար») երեք անգամ այցելեց Հայաստան՝ 2008 թվականի մարտին, հուլիսին և նոյեմբերին։ Այն ժամանակ նա խորհուրդ տվեց ազատ արձակել հանցավոր բռնության կոնկրետ արարքներ չկատարած կալանավորներին, ոստիկանության և անվտանգության ուժերի կողմից ավելորդ ուժի գործադրման և ազատազրկված անձանց նկատմամբ դաժան վերաբերմունքի դեպքերը հետաքննել և մեղավորներին պատասխանատվության ենթարկել, ինչպես նաև՝ անցկացնել 2008 թվականի մարտի իրադարձությունների անկախ, անկողմնակալ, թափանցիկ և վստահելի (ընդ որում, նաև՝ հանրության կողմից որպես այդպիսին ընկալվող) քննություն։[2]

11. Հանձնակատարի գրասենյակը Հայաստանի իշխանությունների խնդրանքով ապահովեց միջազգային փորձագետի աջակցությունը մարտի իրադարձությունները քննող փորձագիտական խմբի (փաստահավաք խմբի) ստեղծման գործընթացում։

## 1. Ազատազրկված անձինք

12. 2008 թվականի իր այցերի շրջանակում Հանձնակատարը խորհուրդ տվեց, որպեսզի քրեական բռնության կոնկրետ գործողություններ չկատարած բոլոր ազատազրկվածներն ազատ արձակվեն, և որպեսզի արտահայտված հակակառավարական կարծիքների հիման վրա մարդկանց մեղադրանք չներկայացվի և նրանց նկատմամբ դատական վարույթ չհարուցվի։ Ավելին, Հանձնակատարը կոչ արեց Հայաստանի իշխանություններին հետաքննել իրադարձությունների առնչությամբ ձերբակալված և կալանավորված անձանց նկատմամբ դաժան վերաբերմունքի գործադրման դեպքերը և պատասխանատվության ենթարկել մեղավորներին։

13. Եվրոպայի խորհրդի Վենետիկյան հանձնաժողովը և Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը (ԵԽԽՎ) դրական գնահատեցին 2009 թվականի մարտի 18-ին Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածում (զանգվածային անկարգություններ) և 300-րդ հոդվածում (պետական իշխանությունը յուրացնելը) փոփոխությունների ընդունումը։ Վերոհիշյալ նորմերը լայնորեն կիրառվել էին 2008 թվականի ընտրություններին հաջորդած ցույցերի մասնակիցներին և ընդդիմության ակտիվիստներին ձերբակալելիս և նրանց նկատմամբ մեղադրական դատավճիռներ կայացնելիս։ Վենետիկյան հանձնաժողովը և ԵԽԽՎ-ն համարեցին, որ փոփոխությունները նախկին դրույթների համեմատ

[2] Համեմատության համար տես, օրինակ, CommDH(2008)11REV, 20-ը մարտի, 2008 թ., և CommDH(2008), 29-ը սեպտեմբերի, 2008 թ.։

ընդհանուր առմամբ բարելավված էին, քանի որ դրանցով նվազեցվում էր չափազանց տարածական և չարաշահող մեկնաբանության հնարավորությունը, մասնավորապես՝ այդ ժամանակ դեռևս դատարանների կողմից քննվող գործերի առնչությամբ:[3]

14. Ազգային ժողովի կողմից 2009 թվականի հունիսի 19-ին ընդունված համաներման մասին որոշման արդյունքում ազատ արձակվեց 2008 թվականի մարտի 1-ի և 2-ի իրադարձությունների կապակցությամբ ազատազրկված անձանց մեծամասնությունը, այսինքն՝ նրանք, ովքեր բռնի հանցագործությունների մեջ չէին մեղադրվել կամ չէին դատապարտվել հինգ տարին գերազանցող ժամկետով ազատազրկման: Ինչ վերաբերում է համաներման շրջանակի մեջ տեղավորվող այլ դեպքերին, ապա ազատազրկման տեսքով նշանակված համապատասխան պատիժների մնացորդը պետք է կիսով չափ կրճատվեր:[4]

15. Այցի ժամանակ Հայ ազգային կոնգրեսը (ՀԱԿ), որն արտախորհրդարանական հիմնական ընդդիմադիր ուժն է, համարում էր, որ ինը հոգի դեռևս մնում է բանտերում իրենց քաղաքական համոզմունքների հիման վրա, և որ նրանցից ոմանք մեղադրվել և դատապարտվել են մարտի իրադարձությունների առնչությամբ:

16. ԵԱՀԿ-ի Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի («ԺՀՄԻԳ») Դատավարությունների դիտարկման զեկույցում, որը վերաբերում էր 2008 թվականի ապրիլից մինչև 2009 թվականի հուլիս ընկած ժամանակահատվածին, մատնանշվեցին 2008 թվականի մարտի 1-ի և 2-ի իրադարձություններին առնչվող դատավարությունների անցկացման հետ կապված լուրջ թերություններ:

17. ԺՀՄԻԳ-ի զեկույցում ներկայացված մտահոգություններն առնչվում էին արդար դատաքննության իրավունքի և ազատության իրավունքի տարբեր տեսանկյուններին: Զեկույցի եզրակացությունների մեջ նշվում էր, որ ձերբակալման և կալանավորման դատական վերանայումը ոչ միշտ է համապատասխանել միջազգային չափանիշներին, և որ ազատազրկման մասին որոշումները պատշաճ կերպով չեն հիմնավորվել: Մի շարք դատավարություններում դիտորդներն այնպիսի գործելակերպի են հանդիպել, որը կասկածներ է առաջացրել այն առումով, թե արդյոք ամբաստանյալն իսկապես անմեղ է համարվել այնքան ժամանակ, քանի դեռ չի ապացուցվել նրա մեղավորությունը: Բացի այդ, մի շարք դատավորներ անբարենպաստ մեկնաբանություններ են արել՝ ակնարկելով, թե ամբաստանյալները մեղավոր են, իսկ երբեմն էլ՝ ըստ պատշաճի նրանց չեն տեղեկացրել իրենց իրավունքների մասին: Դիտարկված գործերից շատերի շրջանակում բացահայտվել են թերություններ դատախազության և պաշտպանական կողմի միջև դատավարական գործիքների (միջոցների) իրական հավասարության առնչությամբ՝ ի հակադրություն արդար դատաքննության երաշխիքների: ԺՀՄԻԳ-ի զեկույցում նաև նշվել է այն մասին, որ որպես հիմք են ընդունվել վկաների և ամբաստանյալների տված գրավոր նախաքննական ցուցմունքները՝ նույնիսկ այն դեպքերում, երբ նույն անձինք դատարանում տվել են վերոհիշյալ տեղեկություններին հակասող բանավոր ցուցմունքներ: Շատ դեպքերում մեղադրական դատավճիռները կայացվել են՝ հիմնականում հենվելով վկա ոստիկանների ցուցմունքների վրա, որը երբեմն տեղի է ունեցել դատավարական կարգի խախտումներով: Անօրինական ճանապարհով ստացված ապացույցները

---

3 ԵԽԽՎ-ի 1677 (2009) բանաձևը Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների գործառույթի վերաբերյալ, 24-ը հունիսի, 2009 թ.:

4 Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշումը համաներում հայտարարելու մասին, ընդունվել է 2009 թվականի հունիսի 19-ին:

բացառելու պարտավորությունը ոչ միշտ է կատարվել: Դատավարությունների դիտարկման ողջ ընթացքում ԺՀՄԻԳ-ի աշխատողների ուշադրությանն են ներկայացվել ոստիկանության կողմից իրականացված խոշտանգումների և դաժան վերաբերմունքի վերաբերյալ բողոքներ: Դատախազները և դատավորները, եզակի բացառություններով, լռությամբ[5] են վերաբերվել[6] այնպիսի հանգամանքներին, որոնցում նրանք ազգային և միջազգային իրավունքի նորմերի համաձայն պարտավոր են եղել արձագանքել:[7]

18. Դատավորները հենվել են վկաների այնպիսի ցուցմունքների վրա, որոնք, ներկայացված բողոքների համաձայն, ստացվել են հարկադրանքի միջոցով: Մի շարք բողոքներ են հնչեցվել առ այն, թե իրավապահ մարմինների աշխատակիցները դաժան վերաբերմունքի միջոցով հարկադրել են անձանց՝ ցուցմունքներ տալու մարտի իրադարձությունների կապակցությամբ մեղադրվող ընդդիմադիր գործիչների դեմ: Հակոբ Հակոբյանի, Սասուն Միքայելյանի, Մյասնիկ Մալխասյանի (բոլոր երեքը՝ Ազգային ժողովի նախկին պատգամավորներ), Գրիգոր Ոսկերչյանի, Ալեքսանդր Արզումանյանի և Սուրեն Սիրունյանի նկատմամբ հարուցված քրեական գործերով վկաները նշել են, որ իրենց ցուցմունքները տվել են հարկադրանքի և ճնշումների ներքո: 2009 թվականի մայիսին Գլխավոր դատախազությունը հրապարակավ նշել է, որ վերոհիշյալ բողոքների առնչությամբ հինգ քրեական գործ է հարուցել: Վերջերս Գլխավոր դատախազությունը տեղեկացրեց Հանձնակատարին, որ չորս գործերով քննությունները դադարեցվել են ապացույցների անբավարարության հիմքով, և որ դեռևս քննվող մեկ գործի շրջանակներում կասկածյալներ չեն հայտնաբերվել:

19. ԺՀՄԻԳ-ի Դատավարությունների դիտարկման զեկույցի համաձայն, մի շարք թերություններ են բացահայտվել նաև պաշտպանության իրավունքի, մասնավորապես՝ պաշտպանությունը կազմակերպելու հնարավորության և իրավաբանական ներկայացուցչության արդյունավետության առնչությամբ: Մի շարք գործերի շրջանակներում մտահոգություններ են ի հայտ եկել դատավորների անկողմնակալության և մասնագիտական վարքագծի կապակցությամբ:[8]

20. Ընդդիմադիր յոթ առավել հայտնի գործիչներից, ովքեր իշխանությունների կարծիքով առաջատար դեր էին կատարել մարտի իրադարձություններում, վեցը 2009 թվականի կեսերի դրությամբ ազատ էին արձակվել, հիմնականում՝ համաներման չափանիշներին համապատասխանելու հիմքով (Ալեքսանդր Արզումանյան, Հակոբ Հակոբյան,

---

[5] Հայաստանի Սահմանադրությամբ նախատեսվում է սեփական անձի դեմ ցուցմունք տալուն չհարկադրվելու իրավունքը, և արգելվում է անօրինական ճանապարհով ստացված ապացույցների օգտագործումը (22-րդ հոդված): Խոշտանգումն արգելված է քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով: Քրեական դատավարության օրենսգրքով արգելվում է խոշտանգման կամ այլ անօրինական միջոցներով ձեռք բերված ապացույցների օգտագործումը (11-րդ և 105-րդ հոդվածներ):

[6] Խոշտանգումն արգելված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 3-րդ հոդվածով, և պետությունները (Պայմանավորվող կողմերը) պարտավոր են քննել ամբաստանյալների ներկայացրած՝ խոշտանգումների և դաժան վերաբերմունքի վերաբերյալ բողոքները ՄԻԵԿ-ի 13-րդ հոդվածի հիման վրա: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) իր նախադեպային որոշումներում անդրադարձել է քննելու պարտավորությանը և ընդգծել, որ քննությունը պետք է կարողանա հանգեցնել մեղավորների բացահայտմանը և պատասխանատվության ենթարկմանը:

[7] Հայաստանում դատավարությունների դիտարկման ծրագրի ավարտական զեկույց (2008 թվականի ապրիլ-2009 թվականի հուլիս), Վարշավա, 8-ը մարտի, 2010 թ.:

[8] Հայաստանում դատավարությունների դիտարկման ծրագրի ավարտական զեկույց (2008 թվականի ապրիլ-2009 թվականի հուլիս), Վարշավա, 8-ը մարտի, 2010 թ.:

Շանթ Հարությունյան, Մյասնիկ Մալխասյան[9], Սուրեն Սիրունյան և Գրիգոր Ոսկերչյան)։ Ազատազրկման մեջ է մնում Սասուն Միքայելյանը։

21. Կալանավորված և ընդդիմադիր մի քանի գործիչներ ազատ արձակվեցին 2010 թվականի նոյեմբերին և դեկտեմբերին՝ պատժի կեսը կրելուց հետո, կամ՝ օգտվելով պայմանական վաղաժամկետ ազատման իրավունքից։ Նրանք են Աշոտ Մանուկյանը (1-ը նոյեմբերի), Մուշեղ Սաղաթելյանը[10] (24-ը նոյեմբերի), Գաբրիել Գաբրիելյանը (6-ը դեկտեմբերի) և Ֆելիքս Գևորգյանը (9-ը դեկտեմբերի)։

22. Այցի ժամանակ ՀԱԿ-ի տրամադրած ցանկում ներառված ինը ազատազրկվածներից յոթի գործերը Հանձնակատարը հնարավորություն ունեցավ քննարկել իշխանությունների հետ, այդ թվում՝ նրանց ազատ արձակելու հնարավորությունների մասով։[11]

23. Հանձնակատարը հանդիպեց Ազգային ժողովի նախկին պատգամավոր Սասուն Միքայելյանի հետ,[12] ով պահվում էր Երևանում գտնվող Բանտարկյալների հիվանդանոցում։ Պրն. Միքայելյանը դատապարտվել է 8 տարվա ազատազրկման Հայաստանի քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի (զանգվածային անկարգություններ) և 235-րդ հոդվածի (ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, փոխադրելը կամ կրելը) հիման վրա։ Նրա գործով անցնող որոշ վկաներ նշել են, որ ցուցմունքներն իրենցից կորզվել են իրավապահ մարմինների կողմից կիրառվող հարկադրանքի պայմաններում։ Պրն. Միքայելյանը վատառողջ է. նա ունի սրտի հիվանդություն և ազատազրկման ընթացքում երեք անգամ ենթարկվել է սրտի վիրահատության։

24. Արթիկի բանտում (Շիրակի մարզ) Հանձնակատարը հանդիպեց Հարություն Ուռուտյանին,[13] ով 6 տարվա ազատազրկման է դատապարտվել Հայաստանի քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի (ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը) և 112-րդ հոդվածի (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը) հիման վրա։ Պրն. Ուռուտյանը նշեց, որ իրեն ձերբակալել են նախագահական ընտրության օրը՝ այն բանից հետո, երբ փորձել էր խափանել բազմակի և անօրինական քվեարկության տեղի ունենալը, որից հետո վեճի էր բռնվել Սերժ Սարգսյանի վստահված անձ Սուրեն Ավետիսյանի հետ, ով, ստացված որոշ տեղեկությունների համաձայն, նախկինում դատվել է ընտրություններին առնչվող հանցագործությունների մեղադրանքով։ Չնայած պրն. Ուռուտյանի պնդումներին այն մասին, որ ինքն այդ առիթով հարձակման էր ենթարկվել և ստացել մարմնական վնասվածք, քրեական մեղադրանք էր ներկայացվել հենց իրեն՝ սկզբնապես քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածի (դիտավորությամբ

---

[9] Մյասնիկ Մալխասյանը Հայաստանի դեմ գանգատ է ներկայացրել ՄԻԵԴ 2008 թվականի սեպտեմբերի 20-ին (գանգատ թիվ 49020/08)։

[10] Մուշեղ Սաղաթելյանը Հայաստանի դեմ գանգատ է ներկայացրել ՄԻԵԴ 2008 թվականի ապրիլի 22-ին (գանգատ թիվ 23086/08)։ Կրկին 2008 թվականի մարտի իրադարձությունների առնչությամբ, Ասլան Ավետիսյանը Հայաստանի դեմ գանգատ է ներկայացրել ՄԻԵԴ 2008 թվականի մայիսի 24-ին (գանգատ թիվ 29731/08)։

[11] Քննարկված գործերը վերաբերում էին Արամ Բարեղամյանին, Սարգիս Հացպանյանին, Արա Հովհաննիսյանին, Սասուն Միքայելյանին, Ռոման Մնացականյանին, Նիկոլ Փաշինյանին և Հարություն Ուռուտյանին։

[12] Սասուն Միքայելյանը Լեռնային Ղարաբաղի հակամարտության վետերան է, Հրազդան քաղաքի նախկին քաղաքապետը։

[13] Հարություն Ուռուտյանը ՀԱԿ-ի անդամ է, Մարալիկ քաղաքում եղել է Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբի ղեկավարը, ինչպես նաև՝ նրա վստահված անձը 2008 թվականի փետրվարի նախագահական ընտրությունների ընթացքում։

առողջությանը թեթև վնաս պատճառելը) հիման վրա, ապա՝ 112-րդ հոդվածի (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը) հիման վրա: 2011 թվականի մարտի 17-ին, այսինքն՝ Հանձնակատարի այցից մոտ երկու ամիս անց, պրն. Ուռուտյանն ազատ է արձակվել:

25. Հանձնակատարն Արթիկի բանտում հանդիպեց մեկ այլ անձնավորության՝ ընդդիմության ակտիվիստ և «*Հայկական ժամանակ*» օրաթերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանի հետ: Պրն. Փաշինյանը, ով ազատության մեջ էր եղել 2008 թվականի մարտից ի վեր, ինքնակամ ներկայացել էր գլխավոր դատախազություն 2009 թվականի հուլիսին, որից հետո նրան մեղադրանք էր ներկայացվել քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի (զանգվածային անկարգություններ) և 316-րդ հոդվածի (իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը) հիման վրա, և նա կալանավորվել էր.[14] 2010 թվականի հունվարի 19-ին պրն. Փաշինյանը մեղավոր էր ճանաչվել «զանգվածային անկարգություններ կազմակերպելու մեջ» և դատապարտվել էր 7 տարվա ազատազրկման.[15] Նրա նկատմամբ կայացված դատավճիռն անփոփոխ էր թողնվել վերաքննիչ դատարանի 2010 թվականի մարտի 9-ի դատավճռով, որով միաժամանակ նրա նկատմամբ կիրառվել էր համաներումը՝ կիսով չափ կրճատելով պրն. Փաշինյանի ազատազրկման պատժի չկրած մասը: Վճռաբեկ դատարանը 2010 թվականի մայիսի 5-ին մերժել էր վերաքննիչ դատարանի որոշման դեմ Նիկոլ Փաշինյանի պաշտպանների ներկայացրած վճռաբեկ բողոքը.[16]

26. Հանձնակատարի հետ հանդիպման ընթացքում պրն. Փաշինյանը նշեց, որ իր դեմ ներկայացված մեղադրանքը որևէ կոնկրետ ապացույցով հիմնավորված չի եղել, և որ հիմնական տարրը եղել է 2008 թվականի մարտի 1-ին իր ունեցած ելույթի փորձաքննությունը: Գլխավոր դատախազը հաստատեց, որ իսկապես անցկացվել է պրն. Փաշինյանի ելույթի լեզվահոգեբանական առանձնահատկությունների մանրակրկիտ փորձաքննություն, և որ դա էական նշանակություն է ունեցել զանգվածային անկարգությունների կազմակերպման մեջ նրա դերակատարումն ապացուցելու հարցում:

27. Ընդդիմությունը, լրատվամիջոցները և որոշակի հասարակական կազմակերպություններ որոշ տեղեկություններ են տարածել Կոշի բանտում գտնվելու ընթացքում Նիկոլ Փաշինյանի նկատմամբ ճնշումների և հարձակումների վերաբերյալ, հատկապես՝ 2010 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների միջև ընկած ժամանակահատվածում: Իշխանությունները (Արդարադատության նախարարությունը) վիճարկել է այդ տեղեկությունների արժանահավատությունը՝ նշելով, որ իրականում տեղի են ունեցել վիճաբանություններ պրն. Փաշինյանի և նրա հետ նույն խցում պահվող անձանց միջև: 2010 թվականի նոյեմբերի 11-ին, երբ ի հայտ են եկել նոր բողոքներ առ այն, որ գիշերվա ժամերին մի քանի դիմակավորված անձինք խցում հարձակվել են Նիկոլ Փաշինյանի վրա, բանտի ղեկավարությունը հայտարարել է, որ պրն. Փաշինյանի բժշկական զննությամբ ֆիզիկական հարձակման որևէ նշաններ չեն հայտնաբերվել: Նշված դրվագից հետո որոշում է կայացվել, ելնելով անվտանգության նկատառումներից, պրն. Փաշինյանին պահել մենախցում: 2010 թվականի դեկտեմբերին նա տեղափոխվել է Արթիկի բանտ՝ պահման «փակ» ռեժիմով՝ արտաքին աշխարհի հետ հաղորդակցության առավել սահմանափակ հնարավորություններով: Գլխավոր դատախազությունը 2011 թվականի

---

[14] Մարտի իրադարձությունների համատեքստում կամովին իշխանություններին հանձնվող այլ անձանց դեպքում ազատազրկում չի կիրառվել: ԵԽԽՎ-ն 1677 (2009) բանաձևի 5.3 կետում կոչ է արել Հայաստանի իշխանություններին՝ թույլատրելու, որպեսզի նախքան 2009 թվականի հուլիսի 31-ն ինքնակամ իշխանություններին ներկայացող համապատասխան անձինք ազատ մնան իրենց գործերի դատական քննության ժամանակահատվածում:
[15] Եվրոպայի խորհրդի տեղի գրասենյակի հաշվետվություն, DPA /Inf(2010)8:
[16] Եվրոպայի խորհրդի տեղի գրասենյակի հաշվետվություն, DPA/Inf (2010)22:

մարտի սկզբներին հայտարարել է, որ քրեական քննություն է հարուցվել պրն. Փաշինյանի նկատմամբ ենթադրյալ գիշերային հարձակման գործով։

28. Հանձնակատարի ուշադրությանն է ներկայացվել այն հանգամանքը, որ Նիկոլ Փաշինյանի գործով վիճարկվող հիմնական հարցերից է եղել այն, թե արդյոք մեղադրական դատավճիռ կայացումից առաջ նրա՝ ազատազրկման մեջ անցկացրած ժամկետը պետք է ներառված լիներ համաներման որոշման կիրառության արդյունքում կիսով չափ կրճատվելիք ժամանակահատվածի հաշվարկի մեջ։ Հանձնակատարի պատկերացմամբ՝ բանտային ղեկավարությունը որդեգրել է այն դիրքորոշումը, որ նախնական կալանքի ժամանակահատվածը (կալանքի տակ պահելը մինչև դատը) չի ներառվելու համաներման արդյունքում կրճատվող ազատազրկման ժամանակահատվածի հաշվարկի մեջ։ Նրա պաշտպանները բողոքարկել էին այդ որոշման դեմ՝ պնդելով, թե նախքան մեղադրական դատավճռի կայացումը կալանքի մեջ անցկացրած ժամանակահատվածը պետք է ներառված լիներ հաշվակի մեջ, որի արդյունքում Նիկոլ Փաշինյանի ազատազրկման ժամկետի ընդհանուր տևողությունը կկրճատվեր մոտ հինգ ամսով։

29. Հանձնակատարը հնարավորություն ունեցավ՝ տարբեր զրուցակիցների հետ քննարկելու նաև Ֆրանսիայի հայ ազգի քաղաքացի Սարգիս Հացպանյանի գործը, ով կնոջ (Հայաստանի քաղաքացուհի) և երկու երեխաների հետ բնակվում էր Հայաստանում։ Պրն. Հացպանյանի նկատմամբ 2009 թվականի ապրիլի 9-ին կայացվել էր մեղադրական դատավճիռ, որով նա 3.5 տարվա ազատազրկման էր դատապարտվել Հայաստանի քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի (սուտմատնություն) հատկանիշներով՝ 2008 թվականի նոյեմբերի 3-ին հայկական թերթերից մեկին տված հարցազրույցի հիման վրա։ Նրա ազգականները մտահոգություն են հայտնել, որ բանտից ազատվելուց հետո նա կվտարվի Հայաստանից։

30. Հանձնակատարը հանդիպեց դեռևս բանտարկված անձանց ազգականների հետ, ովքեր նշեցին, որ իրավիճակը զգալի բարդություններ է առաջացրել իրենց ընտանիքների համար, մասնավորապես՝ հիմնական կերակրողի եկամուտը կորցնելու պատճառով։ Ընտանիքների անդամներից ոմանք նաև նշեցին, որ ընդդիմությանը հարելու պատճառով իրենք գնալով ավելի լուրջ դժվարությունների են հանդիպել աշխատանք գտնելու կամ ունեցած աշխատանք պահպանելու հարցում։

*Եզրակացություններ և առաջարկություններ*

31. Ի գիտություն ընդունելով, որ Հայաստանի իշխանությունները ձեռնարկել են որոշ միջոցներ, որոնց արդյունքում ազատ են արձակվել 2008 թվականի մարտի 1-ի և 2-ի իրադարձությունների առնչությամբ ազատազրկված անձանցից շատերը, Հանձնակատարը նախկինի նման լուրջ մտահոգություններ ունի կալանքի տակ մնացող անձանց կապակցությամբ։ Հանձնակատարը զգալի թվով արժանահավատ տեղեկություններ և այլ տվյալներ է ստացել, որոնք էականորեն վկայում են 2008 թվականի մարտի 1-ի և 2-ի իրադարձություններին առնչվող գործերի քրեական քննությունը և դատական գործընթացները վնասող՝ մարդու իրավունքների խախտումների և այլ լուրջ թերությունների առկայության մասին։ Նշվածը կասկածի տակ է դնում ներկայացված մեղադրանքների և կայացված վերջնական մեղադրական դատավճիռների արժանահավատությունը։

32. Հանձնակատարը կոչ է անում Հայաստանի իշխանություններին ազատ արձակել մարտի իրադարձությունների առնչությամբ մինչ օրս բանտում պահվող ընդդիմադիր ակտիվիստներին։ Հնարավոր է, որ դա նպաստի նաև խորապես արմատացած քաղաքական տարակարծությունների հետևանքը մինչ օրս կրող հայ հասարակության վերքերի ամոքմանը։

33. Հանձնակատարը կարծում է, որ բանտում գտնվելու ընթացքում առկա է Սասուն Միքայելյանի առողջական վիճակի վատթարացման ռիսկ, և քաջալերում իշխանություններին՝ դիտարկելու այդ հիմքով նրան ազատ արձակելու հնարավորությունը:[17]

34. Հանձնակատարը ողջունում է 2011 թվականի մարտի 17-ին Հարություն Ուռուտյանի և Ռոման Մնացականյանի ազատ արձակումը:[18]

35. Հանձնակատարը կոչ է անում հայաստանյան իշխանություններին՝ թույլատրելու Նիկոլ Փաշինյանի տեսակցությունները իր փաստաբանի հետ լիարժեք գաղտնիության պայմաններում: Ավելին, Հանձնակատարը խնդրահարույց է համարում այն հանգամանքը, որ նախնական կալանքի ժամանակահատվածը չի ներառվել կրճատման (տվյալ դեպքում՝ կիսով չափ կրճատման) ենթակա ժամանակահատվածի հաշվարկի մեջ: Դա նշանակում է, որ որքան ավելի երկար է անձը մնում նախնական կալանքի տակ, որի ընթացքում նա պետք է կանխավարկածով համարվի անմեղ, այնքան ավելի երկար է լինում նրա՝ ազատազրկման մեջ անցկացրած ժամանակի ընդհանուր տևողությունը: Հանձնակատարը կոչ է անում հայաստանյան իշխանություններին՝ կիրառելու ավելի արդար և մեծահոգի տարբերակը, և դիտարկելու վաղաժամկետ ազատ արձակվելու իրավունքի հիման վրա պրն. Փաշինյանին ազատ արձակելու հնարավորությունը:

36. Հանձնակատարը կոչ է անում հայաստանյան իշխանություններին՝ ազատ արձակելու պրն. Հացպանյանին՝ հաշվի առնելով, որ նա արդեն իսկ իրավասու է օգտվելու վաղաժամկետ ազատումից, և գտնելու լուծում նրա կարգավիճակի խնդրին, որպեսզի նրան թույլատրվի մնալ Հայաստանում՝ իր ընտանիքի հետ:

37. Հանձնակատարին մտահոգում է նաև այն անձանց ազգականների վիճակը, ովքեր դատապարտվել և գտնվել կամ գտնվում են ազատազրկման մեջ մարտի իրադարձությունների արդյունքում. Հանձնակատարն այս առումով ցանկանում է հիշատակել, որ քաղաքական համոզմունքների պատճառով մարդկանց նկատմամբ տարբեր կերպ վերաբերվելն ընդունելի չէ:

## 2. Մահվան դեպքերի քննությունը

38. Հանձնակատարն առանձնահատուկ ուշադրությամբ անդրադարձավ 2008 թվականի մարտի իրադարձությունների ընթացքում տեղի ունեցած մահվան տասը դեպքերի հիմնախնդրին:[19] Այդ գործերով քննության արդյունքների բացակայությունը խորը մտահոգության տեղիք է տալիս: Մեղավորներից ոչ մեկը մինչ օրս չի բացահայտվել: Ավելին, տպավորություն է առաջանում, որ լրջորեն չի ուսումնասիրվել ոստիկանության և անվտանգության ծառայությունների՝ իրադարձությունների ընթացքում իրենց լիազորություններն իրականացնող բարձրաստիճան պաշտոնյաների հրամանատարական պատասխանատվության խնդիրը: Խորհրդարանական ուսումնասիրող հանձնաժողովն արձանագրեց, որ գտնում է, որ 2008 թվականի մարտի իրադարձություններից հետո ոստիկանության մի քանի բարձրաստիճան պաշտոնյաների աշխատանքից ազատումը հիմնականում

---

17 Հայաստանի քրեական օրենսգրքով նախատեսվում է ծանր հիվանդության հետևանքով պատժից ազատելու հնարավորությունը (79-րդ հոդված):

18 2011 թվականի մայիսի 2-ին ազատ է արձակվել Արամ Բարեղամյանը:

19 2008 թվականի մարտի 1-ի իրադարձությունների հետևանքով մահացած 10 անձինք են Տիգրան Աբգարյանը, Արմեն Ֆարմանյանը, Գրիգոր Գևորգյանը, Սամվել Հարությունյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Զաքար Հովհաննիսյանը, Տիգրան Խաչատրյանը, Գոռ Քլոյանը, Դավիթ Պետրոսյանը և Համլետ Թադևոսյանը:

կապված է եղել մարտի 1-ի և 2-ի իրադարձությունների հետ։[20] Այնուհանդերձ, դա չկապվեց մահվան տասը դեպքերի համար պատասխանատուների հայտնաբերման խնդրին։[21] Այս իրավիճակն առաջացրել է անարդարության սուր զգացում, հատկապես մահացածների ընտանիքների մոտ։

39. Տասը զոհերից մեկը (ոստիկան) մահացել է ձեռքի նռնակի պայթյունի, հինգը՝ հրազենից արձակված գնդակի պատճառած մարմնական վնասվածքներից, երեքը՝ «Չերյոմուխա-7» տեսակի գազային նռնակի պատճառած մարմնական վնասվածքներից, և մեկը՝ բութ առարկայով գլխին հասցված վնասվածքներից։ Հրազենից արձակված գնդակի պատճառած մարմնական վնասվածքներից մահացած հինգ անձանցից երկուսի դեպքում գնդակներն արձակված են եղել ՊՄ «Մակարով» ատրճանակից, մեկը՝ Կալաշնիկով-47 ինքնաձիգից, իսկ երկուսի դեպքում օգտագործված հրազենի տեսակը հնարավոր չի եղել պարզել, քանի որ զոհերի մարմինների մեջ հնարավոր չի եղել գտնել գնդակները։

40. Հարկ է նշել, որ 2008 թվականի մարտի իրադարձությունների ընթացքում ոստիկանությունը ցուցարարների գլխավերևում լուսածիր փամփուշտներ է արձակել Կալաշնիկով ինքնաձիգներից։ Եթե այս հանգամանքը դիտարկենք այն փաստի հետ միասին, որ ՊՄ «Մակարով»-ը Հայաստանի ոստիկանության կողմից ծառայության մեջ կրվող ստանդարտ հրազենն է, տպավորություն է առաջանում, որ շատ հավանական է, որ զոհերի մարմինների մեջ հայտնաբերված գնդակների որոշ մասը կարելի է նույնականացնել դրանք արձակած զենքերի հետ։ Այնուհանդերձ, քննչական ծառայությունները նշեցին, որ իրենք չեն կարողացել նույնականացնել գնդակներից որևէ մեկը՝ չնայած նրան, որ ստուգել են ոստիկանության կողմից օգտագործված զենքի բոլոր առկա միավորները։ Ավելին, անհնար է եղել երեք անձանց մահվան պատճառ դարձած արցունքաբեր նռնակները նույնականացնել դրանք արձակած զենքի հետ՝ այն պատճառով, որ տվյալ զենքի փողը ձգաքանական պատշաճ հետք չի թողնում նռնակի պլաստմասայե պատյանի վրա[22] (այս փաստը հաստատեց նաև օտարերկրացի փորձագետը)։

41. Հանձնակատարի հետ հանդիպման ընթացքում Հայաստանի գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը տեղեկացրեց, որ դեռևս հնարավոր չի եղել բացահայտել մահվան դեպքերը։

42. Պարզվել է, որ 2008 թվականի մարտի բախումների ընթացքում «Չերյոմուխա-7» տեսակի գազային նռնակներ են օգտագործել չորս ոստիկաններ, սակայն

---

[20] 2008 թվականի մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունը, Երևան, 2009 թ. սեպտեմբեր, էջ 127:

[21] 2008 թվականի մայիսին ոստիկանության պետ Հայկ Հարությունյանին (վերջինս հետագայում նշանակվել է Քրեակատարողական ծառայության (արդարադատության նախարարության ենթակայության ներքո) պետ) փոխարինեց Ալիկ Սարգսյանը (նախկինում՝ Արարատի մարզպետ)։ Ապա, աշխատանքից ազատվեցին ոստիկանության պետի առաջին տեղակալ Արարատ Մահտեսյանը, ինչպես նաև՝ Պետական պահպանության ծառայության (բարձրաստիճան պետական պաշտոնյաների պահպանության համար պատասխանատու գործակալություն) պետ Գրիգորի Սարգսյանը (Ալիկ Սարգսյանի եղբայրը)։ Աշխատանքից ազատվելու մասին պաշտոնական հայտարարություններում չէր նշվում 2008 թվականի մարտի իրադարձությունների հետ որևէ առնչության մասին։

[22] 2008 թվականի մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացության վերաբերյալ տեղեկանք, Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից պարտավորությունների և հանձնառությունների կատարման հանձնաժողով, AS/Mon(2009)38rev2, 6-ը հունվարի, 2010 թ.։

քննությունը չի կարողացել պարզել, թե նրանցից ով է արձակել մահաբեր կրակոցները, որոնց հետևանքով զոհվել են երեք անձինք։ Ավելին, քննությամբ հնարավոր չի եղել հայտնաբերել դեպքի վայրում ներկա գտնված վկաների, ովքեր կարող էին օգնել՝ պարզաբանելու տվյալ հարցը։ Դատախազական մարմինները հայտարարել են, թե «Չերյոմուխա-7» տեսակի գազային նռնակների օգտագործումն օրինական է եղել։ Ի հակադրություն, ուսումնասիրող հանձնաժողովի զեկույցում եզրակացությունը եղել է այն, որ գազային արցունքաբեր նռնակների օգտագործումը հակասել է անվտանգության կանոններին՝ հաշվի առնելով հենց իրենց՝ ոստիկանների ստացած մարմնական վնասվածքները։[23]

43. Գլխավոր դատախազը տեղեկացրեց Հանձնակատարին, որ շարունակվելու է դիտավորյալ սպանության հատկանիշներով հարուցված գործի քննությունը։ Նա այն կարծիքի էր, որ իրավապահ մարմինների և անվտանգության ուժերի կողմից ուժի գործադրումը 2008 թվականի մարտի իրադարձությունների ընթացքում օրինական է եղել և անհրաժեշտ՝ կանխելու համար մարդկային կորուստները և հարձակումը պետության կառույցների վրա։ Միևնույն ժամանակ, նա նշեց, որ իր գրասենյակը պատրաստ է տվյալ գործի քննության շրջանակներում դիտարկել նոր փորձաքննություններ, փաստեր և տարրեր։

44. Հանձնակատարի զրուցակիցներից ոմանք կարծիք հայտնեցին, որ քննությունն արհեստավարժորեն չի անցկացվել։ Ավելին, ինչպես նշվել է խորհրդարանական ուսումնասիրող հանձնաժողովի զեկույցում (համեմատության համար տես ստորև՝ 67-րդ կետը), ոստիկանությունը ջնջել է լրագրողների և քաղաքացիների որոշակի կարևոր տեսագրությունների նյութեր։

45. 2009 թվականի օգոստոսի 27-ին Հատուկ քննչական ծառայությունը (ՀՔԾ) 2008 թվականի մարտի 1-ի իրադարձությունների ընթացքում ցուցարարների նկատմամբ բռնություն գործադրելու մեղադրանք է ներկայացրել չորս ոստիկանների։[24] Նրանք մեղադրվել են քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի («պաշտոնեական լիազորությունները անցնելը») հիման վրա։ Ոստիկաններից երկուսը դատապարտվել են երեքական, մյուս երկուսը՝ երկուական տարվա ազատազրկման։ Բոլոր չորսն ազատ են արձակվել համաներում հայտարարելու մասին 2009 թվականի հունիսի 19-ի որոշման համաձայն։[25] Գլխավոր դատախազը հաստատել է վերոհիշյալ տեղեկությունները։

46. Հանձնակատարը հանդիպեց զոհվածների մեծ մասի ազգականների հետ, ովքեր իրենց լուրջ անհամաձայնությունը հայտնեցին քննության և դատական գործընթացներին՝ պնդելով, թե քրեական արդարադատության համակարգի տարբեր ներկայացուցիչներ, այդ թվում՝ ոստիկաններ, գլխավոր դատախազության և ՀՔԾ-ի քննիչներ, ինչպես նաև դատավորներ, իրենց նկատմամբ դրսևորել են ոչ արհեստավարժ և/կամ նվաստացուցիչ վերաբերմունք։ Ազգականները, մասնավորապես, նշում էին, որ գործերի քննության առնչվող նյութերը և տեղեկությունները բավարար չափով հասանելի չեն եղել ոչ իրենց, ոչ իրենց փաստաբաններին։ Դա արդար դատաքննության չափանիշների, մասնավորապես՝ դատավարական գործիքների (միջոցների) հավասարության և մրցակցային դատավարության

[23] 2008 թվականի մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունը, Երևան, 2009 թ. սեպտեմբեր, էջ 106։

[24] Եվրոպայի խորհրդի տեղի գրասենյակի հաշվետվություն, DPA /Inf(2009)32:

[25] Եվրոպայի խորհրդի տեղի գրասենյակի հաշվետվություն, DPA /Inf(2010)4:

իրավունքների,[26] ինչպես նաև՝ ոստիկանության գործողությունների հետաքննությանը տուժողի ներգրավման[27] միջազգային չափանիշների խախտում է: Ավելին, ընտանիքները որևէ փոխհատուցում չեն ստացել 2008 թվականի մարտի 1-ի իրադարձությունների ընթացքում իրենց ազգականների մահվան դիմաց:

47. 2010 թվականի ապրիլի 16-ին մեկնարկեց 2008 թվականի մարտի 1-ի իրադարձությունների ընթացքում զոհվածների ազգականների բողոքի հիման վրա գլխավոր դատախազության և ՀՔԾ-ի նկատմամբ իրականացվող չորս դատավարություններից մեկը: Ընտանիքների բողոքը վերաբերում էր մահվան հանգամանքները պարզելու և մեղավորներին հայտնաբերելու գործում բավարար առաջընթաց չապահովելուն և իրավապահ մարմինների «անգործությանը»: 2010 թվականի մայիսին և հունիսին դատարանը մերժեց 2008 մարտի իրադարձությունների զոհերի ազգականների ներկայացրած չորս բողոքները: Մերժումը պատճառաբանվեց այն հանգամանքով, որ 2008 թվականի մարտի մահվան դեպքերի քննությունը դեռևս շարունակվում է:

48. Հայաստանում շարունակում է արծարծվել ոստիկանության կողմից չարաշահումների և իրավախախտումների հարցը: 2008 թվականի մարտի իրադարձությունների ընթացքում տեղի ունեցած մահվան տաս դեպքերը, որոնցից մի քանիսն ամենայն հավանականությամբ պայմանավորված են եղել պետական մարմնի կողմից ավելորդ ուժի գործադրմամբ, համընդհանուր ուշադրություն են սևեռել խորքային պրոբլեմների նկատմամբ: Բացի այդ, իրադարձություններին հաջորդած ժամանակահատվածում լայնատարած ձերբակալումների և կալանավորումների առնչությամբ հնչել են դաժան ֆիզիկական վերաբերմունքի վերաբերյալ բազմաթիվ բողոքներ: Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն («CPT») արձանագրել է, որ բողոքների որոշ մասն առերևույթ համապատասխանել է նշված անձանց մարմինների վրա առկա հետքերին կամ նրանց վիճակին:[28]

49. Հանձնակատարի վերջին այցի ժամանակ իրավապաշտպան ՀԿ-ները տեղեկություններ են ներկայացրել ոստիկանության կողմից չարաշահումների և իրավախախտումների կոնկրետ դեպքերի մասին, ներառյալ՝ 2010 թվականի ապրիլին ոստիկանությունում կալանքի տակ գտնվելու ընթացքում սուր ծակող գործիքով պատճառված վերքերից մահացած 24-ամյա Վահան Խալաֆյանի գործի առնչությամբ: 2010 թվականի նոյեմբերին Չարենցավանի ոստիկանության քննչական բաժնի նախկին պետն 8 տարվա ազատազրկման դատապարտվեց պաշտոնեական դիրքը չարաշահելու և Վահան Խալաֆյանին ինքնասպանության դրդելու համար: Մեկ այլ ոստիկան դատապարտվեց երկու տարվա ազատազրկման: Երկու այլք ազատ արձակվեցին: Իրավապաշտպանները և տուժողի հարազատները վիճարկեցին պաշտոնական տարբերակը, որի համաձայն Վահան Խալաֆյանին դրդել են ինքնասպանության: Նրանք կարծում են, որ իրականում Վահան

---

[26] Համեմատության համար տես, օրինակ, *Kuopila-ն ընդդեմ Ֆինլանդիայի*, գանգատ թիվ 27752/95, 2000 թվականի ապրիլի 27-ին կայացված դատավճիռ (38-րդ պարբ.), ինչպես նաև՝ *Jasper-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, գանգատ թիվ 27052/95, Մեծ պալատի 2000 թվականի փետրվարի 16-ի դատավճիռ (51-րդ պարբ.):

[27] Համեմատության համար տես, օրինակ, *Güleç-ն ընդդեմ Թուրքիայի*, գանգատ թիվ 21593/93, 1998 թվականի հուլիսի 27-ի դատավճիռ, 82-րդ պարբ.; ինչպես նաև՝ *McKerr-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, գանգատ թիվ 28883/95, 2001 թվականի մայիսի 4-ի դատավճիռ, 338-րդ պարբ.:

[28] 2008 թվականի մարտի 15-ից 17-ը Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի Հայաստան կատարած այցի վերաբերյալ զեկույցը Հայաստանի կառավարությանը, CPT/Inf(2010)7:

Խալաֆյանին դանակահարելով սպանել են Չարենցավանի ոստիկանության բաժնում։

*Եզրակացություններ և առաջարկություններ*

50. Հանձնակատարը եզրակացնում է, որ 2008 թվականի մարտի 1-2-ին ուժի գործադրումը սահմանազանցող է եղել և հանգեցրել է մարդու իրավունքների լուրջ խախտումների։

51. Հանձնակատարը հայաստանյան իշխանություններին կոչ է անում վճռականորեն հետամուտ լինել մահվան տաս դեպքերի և ձերբակալման և կալանավորման ընթացքում ոստիկանական չարաշահումների դեպքերի քննությանը։

52. Մահվան տաս դեպքերի փաստացի իրականացված քննությունը չի համապատասխանել ոստիկանության գործողությունների արդյունավետ քննության այն սկզբունքներին, որոնք կենսական դերակատարում ունեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 2-րդ հոդվածով նախատեսված՝ կյանքի իրավունքին և 3-րդ հոդվածով ամրագրված՝ խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի արգելքին գործնական նշանակություն հաղորդելու հարցում։ Արդյունավետ քննությունների հիմնարար չափորոշիչները սահմանվել են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) կողմից և ներառում են անկախությունը, համարժեքությունը, հրատապությունը, հանրային վերահսկելիությունը և տուժողների ներգրավումը։ Քննությունը պետք է այնպիսին լինի, որ կարողանա հանգեցնել մեղավորների բացահայտմանը և պատժին։[29]

53. Սույն գործով քննությունը պետք է պարզաբանի մահվան տաս դեպքերի հանգամանքները, բացահայտի այդ գործողությունները կատարած ոստիկաններին և պատասխանատվության ենթարկի նրանց։ Ավելին, պետք է մանրակրկիտ կերպով ուսումնասիրել 2008 թվականի մարտի 1-2-ի իրադարձությունների ընթացքում ղեկավարում իրականացրած՝ ոստիկանության և ազգային անվտանգության բարձրաստիճան պաշտոնյաների հրամանատարական պատասխանատվության հարցը։

54. Տաս զոհերի ընտանիքները պետք է համարժեք փոխհատուցում ստանան իրենց ազգականներին կորցնելու համար, ինչպես նաև՝ լիարժեքորեն ներգրավվեն և տեղեկացվեն քննության ընթացքին։

55. Հույժ կարևոր է ապահովել արդարադատության ի կատարածման տեսանելիությունը։ Հանրությունը պետք է տեղեկացվի քննության առաջընթացին և արդյունքներին։ Դա կնպաստի հաշտեցմանը հայաստանյան հասարակության ներսում։

## 3. Խորհրդարանական ուսումնասիրող հանձնաժողովի ներկայացրած առաջարկությունների կատարման ընթացքը

56. Հանձնակատարը մանրամասնորեն քննարկեց խորհրդարանական ուսումնասիրող հանձնաժողովի աշխատանքից քաղված դասերը և հանձնաժողովի զեկույցում զետեղված առաջարկությունների

[29] Համեմատության համար տես, օրինակ, *Oğur-ն ընդդեմ Թուրքիայի*, գանգատ թիվ 21594/93, Մեծ պալատի 1999 թվականի մայիսի 20-ի դատավճիռ, *Nachova-ն ընդդեմ Բուլղարիայի*, գանգատներ թիվ 43577/98, Մեծ պալատի 2005 թվականի հուլիսի 6-ի դատավճիռ, ինչպես նաև՝ *Ramsahai-ն ընդդեմ Նիդեռլանդների*, գանգատ թիվ 52391/99, Մեծ պալատի 2007 թվականի մայիսի 15-ի դատավճիռ։

իրագործմանն ուղղված ընթացիկ ջանքերը՝ որպես վերջնանպատակ հետապնդելով հաղթահարել 2008 թվականի մարտի 1-2-ի իրադարձությունների ընթացքում բացահայտված թերությունները և վերջիններիս խորքային պատճառները:

57. Ազգային ժողովը 2008 թվականի հունիսին ստեղծել էր 2008 թվականի մարտի 1-ի իրադարձությունների և «դրանց պատճառների» ուսումնասիրության՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողով: Ուսումնասիրող հանձնաժողովի կազմում գերակայում էին իշխող կոալիցիայի ներկայացուցիչները, քանի որ ընդդիմությունը չէր արձագանքել մասնակից դառնալու վերաբերյալ հանձնաժողովի հրավերին: Շատերն այն կարծիքի էին, որ ընդդիմության ներկայացուցիչների չմասնակցելն ազդել է ուսումնասիրող հանձնաժողովի անկողմնակալության և արժանահավատության վրա:

58. 2008 թվականի հուլիսյան այցի ժամանակ Հանձնակատարն առաջարկել էր ստեղծել անկախ փորձագետներից կազմված առանձին՝ ավելի փոքր խումբ, որը կզբաղվեր 2008 թվականի մարտի 1-ի և 2-ի իրադարձությունները փաստագրելու խնդրով, որի հիման վրա ուսումնասիրող հանձնաժողովը կկարողանար եզրակացություններ և առաջարկություններ կազմել: Փաստահավաք խումբը ստեղծվել էր Նախագահի 2008 թվականի հոկտեմբերի 23-ի հրամանագրով՝ բոլոր կողմերի համաձայնությամբ, իշխող կոալիցիայի և ընդդիմության առաջադրած անդամների թվի հավասարության սկզբունքի հիման վրա: Այնուհանդերձ, փաստահավաք խմբի անդամների միջև առաջացավ քաղաքական և ներքին լարվածություն, որն ի վերջո խափանեց խմբի առջև դրված նպատակների իրագործումը: Չնայած որ խումբն իշխանությունների կողմից գրվեց 2009 թվականի մայիսին, այն կարողացավ, այնուամենայնիվ, խորհրդարանական ուսումնասիրող հանձնաժողովի օգտագործմանը ներկայացնել որոշ նյութեր և տեղեկանքներ:

59. 2009 թվականի սեպտեմբերի 16-ին և 17-ին խորհրդարանական ուսումնասիրող հանձնաժողովի նախագահ Սամվել Նիկոյանը ներկայացրեց հանձնաժողովի վերջնական զեկույցը: Փաստելով 2008 թվականի մարտի իրադարձությունների «խորքային պատճառների» որոշ գործոնների համար իշխանությունների պատասխանատվությունը, զեկույցում միաժամանակ արտահայտվեց այն դիրքորոշումը, որ ընդդիմության կողմից, մասնավորապես՝ Լևոն Տեր-Պետրոսյանին սատարող ուժերի կողմից վերոհիշյալ գործոնների և դրանցով պայմանավորված հանրային դժգոհության շահարկումն էր ուղղակիորեն հրահրել զանգվածային անկարգությունները: Ուսումնասիրող հանձնաժողովի զեկույցից տպավորություն է առաջանում, թե իրադարձությունների ողբերգական հաջորդականության համար պատասխանատվության մեծ մասը բաժին է ընկնում ընդդիմությանը և ցուցարարներին: Ընդդիմության դերի այդօրինակ միանշանակ դատապարտումը և իշխանությունների հասցեին քննադատության հարաբերական բացակայությունը շատերի կողմից ընկալվեցին որպես զեկույցի արժանահավատության վրա ազդող հանգամանքներ:

60. Զեկույցի եզրակացությունների մեջ նաև նշվում էր, թե 2008 թվականի մարտի 1-ին և 2-ին ոստիկանության գործողություններն օրինական են եղել և համաչափ՝ միևնույն ժամանակ ի գիտություն ընդունելով, որ ոստիկանությունը բավականաչափ պատրաստված չէր եղել, և որ եղել էին ոստիկանության կողմից թերացումների, ուժի և բռնության անհամաչափ գործադրման դեպքեր, որոնք անհրաժեշտ էր հավուր պատշաճի քննել: Ուսումնասիրող հանձնաժողովի զեկույցի՝ ոստիկանության գործողությունների վերլուծությանը նվիրված հատվածներում ընդհանուր առմամբ շեշտադրվում էր արհեստավարժության պակասը, այլ

ոչ՝ դաժան վերաբերմունքի և մարդու իրավունքների այլ խախտումների վերաբերյալ հնչեցված կոնկրետ բողոքների մանրակրկիտ ուսումնասիրությունը։

61. Զեկույցում մանրամասնորեն քննարկվեցին մահվան տաս դեպքերի հանգամանքները, այդ թվում՝ նաև փաստահավաք խմբի անդամների բարձրացրած հարցադրումների հիման վրա։ Այնուամենայնիվ, ուսումնասիրող հանձնաժողովն ի վիճակի չեղավ արձանագրել նոր տարրեր, որոնցով կպարզաբանվեին մահվան հանգամանքները, և որոնք կնպաստեին մեղավորների բացահայտմանը։ Զեկույցում հեղինակները հույս հայտնեցին, որ շարունակվող քննությունը կնպաստի վերոհիշյալ գործերի բացահայտմանը։ Զեկույցում ոստիկանությունը քննադատվեց քննության գործընթացում և հատուկ միջոցների գործադրման ընթացքում թույլ տված սխալների համար՝ միաժամանակ դրական ընդհանուր գնահատական տալով գլխավոր դատախազության գործունեությանը։

62. Զեկուցում տեղ գտած առաջարկություններից մի քանիսը վերաբերում էին ոստիկանությունը բարեփոխելու, մասնավորապես՝ ոստիկանության մասին բոլոր իրավական ակտերը, այդ թվում՝ հատուկ միջոցների կիրառության կարգը վերանայելու, իրավապահ մարմինների նկատմամբ հանրության վստահությունն ամրապնդելու և ոստիկանության արհեստավարժության մակարդակը բարձրացնելու, այդ թվում՝ վերապատրաստումներ իրականացնելու անհրաժեշտությանը։ Ուսումնասիրող հանձնաժողովը նաև առաջարկեց կոռուպցիայի և անպատժելիության դեմ պայքարի իրավական նախաձեռնություններ։

63. Իրավական և քաղաքական դաշտում խորհրդարանական ուսումնասիրող հանձնաժողովն ընդգծեց դատական համակարգի անկախ գործառույթն ապահովելու նպատակով այն բարեփոխելու անհրաժեշտությունը։ Հանձնաժողովը նաև շեշտեց, որ անհրաժեշտ է իրականացնել քաղաքական և ընտրական բարեփոխումներ։

64. Ինչ վերաբերում է հարկադրանքի ներքո խոստովանական ցուցմունքներ կորզելու վերաբերյալ բողոքներին, ապա խորհրդարանական ուսումնասիրող հանձնաժողովի զեկույցում տրվեց այն գնահատականը, թե դրանք փաստացի տեղի են ունեցել «մեղադրյալների կողմից իրականացված ճնշումների» հետևանքով՝ չնայած այն փաստին, որ մեղադրյալներից և վկաներից մի քանիսը պնդել էին, թե տվյալ իրավիճակում իրավապահ մարմինների աշխատակիցներն իրենց նկատմամբ հարկադրանք էին կիրառել, որն արտացոլվել էր նաև ԺՀՄԻԳ-ի Դատավարությունների դիտարկման զեկույցում (համեմատության համար տես վերը՝ 17-րդ և 18-րդ կետերը):

65. ՀԱԿ-ը դատապարտեց ուսումնասիրող հանձնաժողովի զեկույցը, մինչդեռ Մարդու իրավունքների պաշտպանը մեծ մասամբ դրական կարծիք հայտնեց՝ քննադատելով զեկույցը միայն գլխավոր դատախազության դերը չափազանց դրական գնահատելու մասով։[30] Հայ Հեղափոխական Դաշնակցությունը (ՀՅԴ), որը 2009 թվականի ապրիլից անցել է ընդդիմություն, Հանձնակատարին տեղեկացրեց, որ համակարծիք չէ զեկույցում զետեղված եզրակացություններին և ներկայացրել է տարբերվող կարծիք։

66. Հանձնակատարը հանդիպեց Սամվել Նիկոյանին, ով պատմեց իր՝ որպես ուսումնասիրող հանձնաժողովի նախագահի փորձառության և տվյալ աշխատանքից քաղված դասերի մասին։ Պրն. Նիկոյանը նշեց, որ ուսումնասիրող հանձնաժողովի աշխատանքում առավել նշանակալից երկու

[30] Եվրոպայի խորհրդի տեղի գրասենյակի հաշվետվություն, DPA /Inf(2009)35:

թերություններն էին ընդդիմության ներգրավելու անկարողությունը և մահվան տաս դեպքերի հարցի չլուծումը:

67. Պրն. Նիկոյանը նաև դժգոհություն հայտնեց հանձնաժողովի ուսումնասիրությունների նկատմամբ ոստիկանության անհամագործակցային վերաբերմունքի կապակցությամբ, որը ոչ լիովին էր տեղ գտել ուսումնասիրող հանձնաժողովի զեկույցի մեջ: Նա վերհիշեց, որ ոստիկանությունը լրագրողներից և քաղաքացիներից առգրավել և ջնջել է որոշ տեսանյութեր, որոնք կարող էին առանցքային լինել իրադարձությունների հանգամանքները պարզելու գործում:

68. Զեկույցում զետեղված առաջարկությունների կատարման ընթացքը դիտարկում է Ազգային ժողովի Պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովը, որը մայիսի 27-ին հրապարակեց ուսումնասիրող հանձնաժողովի ներկայացրած առաջարկությունների կատարման ընթացքի վերաբերյալ մոնիթորինգի առաջին հաշվետվությունը.[31] Ազգային ժողովը 2010 թվականի նոյեմբերին սկսեց քննարկել մշտական հանձնաժողովի մոնիթորինգային զեկույցի եզրակացությունները:

69. Հայաստանի իշխանությունները մի քանի նախաձեռնություններ են ստանձնել ուսումնասիրող հանձնաժողովի առաջարկություններն իրագործելու ուղղությամբ: Ընթացիկ աշխատանքների մի զգալի մասը վերաբերում է ոստիկանական ծառայության բարեփոխումներին: Հարկ է հիշատակել, որ նախապատրաստվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից ենթադրյալ խախտումների վերաբերյալ կառավարության որոշման նախագիծ: Հանձնակատարը նաև տեղեկացավ իրավապահ մարմինների գործունեությունը վերահսկող հանձնաժողովի ստեղծման վերաբերյալ իրավական ակտի նախագծի ուղղությամբ տարվող աշխատանքի մասին:

70. Ուսումնասիրող հանձնաժողովի առաջարկությունների իրագործմանն առնչվող այլ աշխատանքներից են լրատվամիջոցներում բազմակարծության ավելացման նպատակով հեռարձակման լիցենզիաների մրցույթի մոնիթորինգը և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքում փոփոխությունները, ընտրական օրենսգրքի, «Հավաքների մասին» նոր օրենքի և քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծումը, ինչպես նաև՝ սոցիալ-տնտեսական բարեփոխումների իրագործման տարբեր ուղիների քննարկումը:

71. Հանձնակատարն այցի շրջանակներում տեղեկացվեց ոստիկանությունում ընթացող բարեփոխումների մասին: ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Արթուր Օսիկյանն ընդգծեց, որ բարեփոխումների գործընթացն ուղղված է ոստիկանության հանդեպ ժողովրդի վստահության, ինչպես նաև ոստիկանության աշխատանքի արդյունավետության մակարդակի բարձրացմանը: Այս ոլորտում զգալի միջազգային աջակցություն է տրամադրվել: Անցկացվել են վերապատրաստման դասընթացներ, և իրականացվել են այլ աշխատանքներ՝ ուղղված այնպիսի հիմնախնդիրների լուծմանը, ինչպիսիք են, օրինակ, ոստիկանության կողմից որոշակի հանգամանքներում ուժի գործադրումը, խաղաղ հավաքների պարագայում ոստիկանության դերակատարումը և հարաբերությունները լրատվամիջոցների հետ: Ոստիկանության պետի տեղակալը նաև նշեց հատուկ միջոցների և զենքի օգտագործումը կարգավորող լրացուցիչ երաշխիքների ներդրման մասին:

[31] Եվրոպայի խորհրդի տեղի գրասենյակի հաշվետվություն, DPA/Inf (2010)22:

*Եզրակացություններ և առաջարկություններ*

72. Հանձնակատարն ուշադրությամբ վերլուծել է մարտի իրադարձությունների և դրանց խորքային պատճառների առնչությամբ խորհրդարանական ուսումնասիրող հանձնաժողովի կատարած աշխատանքը, և դիտարկել է ուսումնասիրող հանձնաժողովի զեկույցում ձևակերպված առաջարկությունների լայն շրջանակը: Առաջարկությունները որպես հիմք են ծառայել մի շարք ոլորտներում իրականացված բարեփոխումների համար: Հանձնակատարը սատարում է այդ ջանքերը և ընդգծում, որ իշխանությունները պետք է այդ գործընթացում սերտորեն խորհրդակցեն քաղաքացիական հասարակության սուբյեկտների հետ՝ նպատակ ունենալով ապահովել և վերաբերելի օրենսդրության, և պրակտիկայի համապատասխանությունը մարդու իրավունքների չափանիշներին:

73. Ինչպես արդեն նշվեց, հույժ կարևոր է, որպեսզի մահվան տաս դեպքերի քննությունն արդյունքներ տա, և որպեսզի այն հայաստանյան հասարակության կողմից ընկալվի որպես արժանահավատ քննություն: Ավելին, բռնության և դաժան վերաբերմունքի գործողությունների համար պատասխանատու ոստիկանական պաշտոնյաները, ինչպես նաև՝ պետք է հայտնաբերվեն և պատասխանատվության ենթարկվեն կարևորագույն տեսանյութերը բռնագրաված և/կամ ոչնչացրած անձինք: Փաստորեն, չնայած ընդդիմության բազմաթիվ ակտիվիստների կամ համախոհների ձերբակալությանը, դատապարտմանը և ազատազրկմանը, պաշտոնյաներից գրեթե ոչ ոք պատասխանատվության չի ենթարկվել կատարված չարաշահումների համար: Դրա հետևանքով առաջացել է խորը տպավորություն առ այն, թե արդարադատությունն ի կատար է ածվել ընտրողաբար:

74. Հանձնակատարը հայաստանյան իշխանություններին քաջալերում է կատարել բարեփոխումներ ոստիկանության, անվտանգության ծառայությունների և իրավապահ այլ համապատասխան կառույցների առնչությամբ, մասնավորապես՝ նպատակ հետապնդելով արմատախիլ անել ոստիկանական բռնությունների և չարաշահումների երևույթը, ինչպես նաև՝ պայքարել խոշտանգումների և դաժան վերաբերմունքի արգելքը խախտող պաշտոնյաների անպատժելիության երևույթի դեմ: Այս համատեքստում Հանձնակատարը նաև քաջալերում է հայաստանյան իշխանություններին՝ դիմելու Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեին («CPT»), որպեսզի վերջինս հրապարակի 2010 թվականի մայիսին Հայաստան կատարած այցի զեկույցը:

75. Պակաս կարևոր չեն դատական իշխանության բարեփոխումները և անկախությունը: Այս համատեքստում Հանձնակատարը կոչ է անում հայաստանյան իշխանություններին՝ շարունակելու սերտ համագործակցությունը Եվրոպայի խորհրդի և միջազգային այլ դերակատարների հետ դատական բարեփոխումների, ներառյալ՝ ԺՀՄԻԳ-ի Դատավարությունների դիտարկման զեկույցում զետեղված առաջարկությունների հիման վրա քրեական դատավարության օրենսգիրքը փոփոխելու գործընթացում:

76. Հանձնակատարը կարծում է, որ իրավապահ մարմինների գործունեությունը վերահսկող,[32] այդ թվում՝ գանգատները քննելու միջոցով գործող

---

[32] Իրավական ակտի նախագծում որպես դրա գործողության շրջանակի մեջ մտնող իրավապահ մարմիններ նշվում են, մասնավորապես, հետևյալ կառույցները՝ ոստիկանություն, ազգային անվտանգության ծառայություն, ռազմական ոստիկանություն, հարկային ծառայություն, մաքսային ծառայություն,

հանձնաժողովի ստեղծումը կարող է զգալիորեն նպաստել իրավապահ կառույցների նկատմամբ հանրության վստահության մակարդակի բարձրացմանը և անպատժելիության դեմ պայքարին: Ստեղծվելիք մեխանիզմը պետք է իսկապես անկախ լինի իրավապահ մարմիններից և իշխանության գործադիր ճյուղից: Հանձնաժողովին պետք է նաև վերապահել պարտավորությունների համարժեք շրջանակ, որը պետք է ներառի մարդու իրավունքների ծանր խախտումների գործերը քննելու հնարավորություն:

***

77. Հանձնակատարը խորապես այն համոզման է, որ սխալ կլիներ անուշադրության մատնել 2008 թվականի մարտի իրադարձությունների՝ մարդու իրավունքների առնչությամբ թողած և դեռևս չհաղթահարված հետևանքները, ինչպես նաև՝ չլուծված թողնել վերոհիշյալ հարցերը: Բնակչության որոշ խմբերի հիասթափության և դժգոհության զգացումը կարող է կրկին նպաստել իրավիճակի վատթարացմանը և բռնության նորանոր պոռթկումների տեղիք տալ: Իշխանությունները պետք է լրացուցիչ քայլեր կատարեն ընդդիմության և տուժողների ազգականների ուղղությամբ, որը կարևոր է նաև հայաստանյան հասարակության ներսում հաշտեցումը խթանելու տեսակետից:

քրեակատարողական ծառայություն, հատուկ քննչական ծառայություն և պաշտպանության նախարարության քննչական վարչություն:

## II. Հիմնարար ազատություններ

### 1. Արտահայտվելու ազատությունը և լրատվամիջոցների ազատությունը

78. 2007 թվականին Հայաստան կատարած այցից հետո Հանձնակատարը նշել էր, որ պետք է միջոցառումներ ձեռնարկել հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով արտահայտվելու ազատությունը և բազմակարծությունը խթանելու ուղղությամբ՝ հաշվի առնելով, որ դրանք տեղեկատվության հիմնական աղբյուրն են Հայաստանում, հատկապես՝ ընտրական ժամանակաշրջանում: Հանձնակատարը նաև կարծիք էր հայտնել, որ հույժ կարևոր է Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի (ՀՌԱՀ) անդամների նշանակման բաց և թափանցիկ գործընթաց ունենալը.[33]

*ա) Օրենսդրությունը*

79. Հանձնակատարը ողջունում է այն փաստը, որ Ազգային ժողովը 2010 թվականի մայիսի 18-ին ընդունել է փոփոխություններ Հայաստանի Հանրապետության քրեական և քաղաքացիական օրենսգրքերում՝ ապաքրեականացնելով զրպարտությունը և վիրավորանքը: Այնուհանդերձ, քաղաքացիական հասարակության սուբյեկտները Հանձնակատարին տեղեկացրել են, որ այդ ապաքրեականացումը միայն մասնակի է եղել, քանի որ «սուտ մատնության» (Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 333-րդ հոդված) վերաբերյալ քրեաիրավական նորմերի կիրառության մեջ, օրինակ, դեռևս չի բացառվում արտահայտվելու ազատության անհարկի սահմանափակումների հնարավորությունը: Մտահոգություններ են առաջ քաշվել նաև քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխությունների առնչությամբ, որոնցով զրպարտության համար քաղաքացիական հայցերի միջոցով նախատեսվում են դրամական մեծ տուգանքներ, որոնք կարող են նշանակվել լրատվամիջոցների նկատմամբ.[34] ՀԿ-ները նշել են նաև անձի պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին վնաս պատճառելու հիմքով հայաստանյան լրատվամիջոցների դեմ ներկայացված քաղաքացիական հայցերի թվաքանակի աճի, ինչպես նաև՝ այդ համատեքստում դատարանների կողմից նշանակվող փոխհատուցման մեծ գումարների մասին, որոնք կարող են վտանգել տվյալ լրատվամիջոցի կենսունակությունը: Որպես օրինակներ նշվել են վերջին շրջանում «Հայկական ժամանակ» և «Ժամանակ» օրաթերթերի դեմ ներկայացված հայցերը և ծավալված դատական գործերը:

80. 2010 թվականի հունիսին ընդունվել են փոփոխություններ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում: Փոփոխությունների մեջ հաշվի են առնվել Եվրոպայի խորհրդի փորձագետների և Լրատվամիջոցների ազատության հարցերով ԵԱՀԿ-ի ներկայացուցչի մի շարք մեկնաբանություններ: Այնուհանդերձ, թե՛ տեղի իրավապաշտպանները, թե՛ միջազգային դերակատարները որոշակի մտահոգություններ են հայտնել ընդունված փոփոխությունների առնչությամբ՝ մտավախություն ունենալով, թե դրանք բացասաբար կազդեն լրատվամիջոցների բազմակարծության վրա և կարգելակեն անկախ հեռարձակման կայացումը: Քաղաքացիական հասարակության դերակատարները և արտահայտվելու և լրատվամիջոցների ազատության բնագավառում աշխատող կազմակերպությունները նույնպես նշել են, որ

33 Մարդու իրավունքների հանձնակատար պրն. Թոմաս Համարբերգի Հայաստան կատարած այցի (7-11-ը հոկտեմբերի, 2007 թ.) վերաբերյալ զեկույցը, CommDH(2008)4:

34 Փոփոխությունները վերաբերում են 19-րդ հոդվածին (պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանությունը) և 60-րդ գլխի 2.1-րդ բաժնի 1087.1-րդ հոդվածին (պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները):

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքում փոփոխությունները մշակելու և ընդունելու գործընթացում հաշվի չեն առնվել իրենց կարծիքները և դիտողությունները:

81. Եվրոպայի խորհրդի փորձագետները և Լրատվամիջոցների ազատության հարցերով ԵԱՀԿ-ի ներկայացուցիչը նաև մատնանշել են օրենքի փոփոխված տարբերակում դեռևս պահպանվող մի քանի թերություններ: Օրինակ, փոփոխություններով նախատեսվում է Հայաստանում հեռարձակվող ալիքների ավելի սահմանափակ թվաքանակ, որը հավանաբար կանդրադառնա արտահայտվող կածիքների հնարավոր տեսականու և բազմազանության վրա:

82. Հասարակական կազմակերպությունները նշել են, որ լիցենզիաների թվի կրճատման հետևանքով լիցենզառու լրատվամիջոցների շրջանում լիցենզիայից զրկվելու մտավախության պատճառով սրվել են ինքնագրաքննության դրսևորումները: Բացի այդ, փոփոխություններով նախատեսվել է, որ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի 22-րդ հոդվածի խախտումներն[35] ինքնաբերաբար հանգեցնում են հեռարձակման լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելուն: Միևնույն ժամանակ, փոփոխված օրենքով չեն նախատեսվում մասնավոր թվային ալիքների ստեղծման հստակ ընթացակարգեր և պայմաններ: Միջազգային փորձագետները նշել են նաև, որ փոփոխված օրենքը չի պարունակում հստակ կանոններ արբանյակով, բջջային հեռախոսով և առցանց (օնլայն) հեռարձակման մասին, և որ փոփոխված օրենքի նպատակն է հեռարձակման բոլոր ձևերի նկատմամբ տարածել ՀՌԱՀ-ի կողմից լիցենզավորման խիստ ռեժիմը:[36]

83. 2010 թվականի աշնանից Մարդու իրավունքների պաշտպանի գլխավորած աշխատանքային խումբն աշխատում է արտահայտվելու ազատության և լրատվամիջոցների ազատության իրավական և կառուցակարգային դաշտը բարելավելու ուղղությամբ: Աշխատանքային խմբի անդամների կեսը կառավարության և Ազգային ժողովի պաշտոնյաներ են, մյուսները՝ քաղաքացիական հասարակության՝ լրատվամիջոցների հարցերով զբաղվող ներկայացուցիչներ: 2010 թվականի հոկտեմբերի կեսերին գումարվել է աշխատանքային խմբի նիստ, որին մասնակցել են քաղաքացիական հասարակության դերակատարները, ինչպես նաև՝ Եվրոպայի խորհրդի և Լրատվամիջոցների ազատության հարցերով ԵԱՀԿ-ի ներկայացուցչի փորձագետները: Նպատակն էր՝ քննարկել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» վերջերս փոփոխված օրենքի բարելավման ուղիները: Աշխատանքային խումբը վերջերս պատրաստել է օրենքի հետագա փոփոխությունների վերաբերյալ առաջարկների փաթեթ:

84. Աշխատանքային խումբն ուշադրություն է դարձրել, ի թիվս այլոց, հետևյալ հարցերին. ՀՌԱՀ-ի և Հանրային հեռուստատեսության և ռադիոյի խորհրդի անկախության երաշխիքները՝ անդամների ընտրություն և բազմակարծություն, ֆինանսական անկախություն, ինչպես նաև՝ ՀՌԱՀ-ի և

---

[35] 22-րդ հոդվածով նախատեսվում է արգելված այն ծրագրերի և բաղադրիչների ցանկը, որոնց հեռարձակումը հանգեցնում է լիցենզիայի գործողության դադարեցմանը: Եվրոպայի խորհրդի և ԵԱՀԿ-ի փորձագետները եզրակացրել են, որ դա կսահմանափակի լրատվամիջոցների ազատությունը և համահունչ չի լինի արտահայտվելու ազատության չափանիշներին, ներառյալ՝ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածին:

[36] Լրատվամիջոցների ազատության հարցերով ԵԱՀԿ-ի ներկայացուցչի մամլո հաղորդագրությունը՝ «Հեռարձակման մասին Հայաստանի օրենքը չի երաշխավորում լրատվամիջոցների բազմակարծությունը» խորագրով, 15-ը հունիսի, 2010 թ.: Տես նաև «Լրատվամիջոցների ազատության հարցերով ԵԱՀԿ-ի փորձագետների կողմից ավելի վաղ (2010 թվականի մայիս և մարտ ամիսներին) ներկայացված՝ Հեռարձակման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխությունների վերաբերյալ մեկնաբանությունների և Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգի վերլուծության լրացում», 10-ը հունիսի, 2010 թ.:

Հանրային հեռուստատեսության և ռադիոյի խորհրդի լիազորություններ և վերահսկողական մեխանիզմներ, լիցենզավորման շրջանակ և ընթացակարգեր՝ լիցենզավորման չափորոշիչներ, հաճախականությունների քարտեզագրում և այլն, արբանյակային, բջջային, ինտերնետային, մալուխային և թվային ցանցերի դասակարգում, մարզային հեռարձակողների գործունեության խրախուսում և վերահեռարձակմանն առնչվող հիմնախնդիրներ:

*բ) Հարձակումներ և ճնշումներ լրագրողների նկատմամբ*

85. Հանձնակատարին ծայրահեղ անհանգստացնում են վերջին երկու տարիների ընթացքում լրագրողների նկատմամբ տեղի ունեցած հարձակումները և ճնշումը: Քաղաքացիական հասարակության սուբյեկտները տեղեկացրել են, որ 2010 թվականի երկրորդ կեսի ընթացքում այս առումով առաջընթաց կա, քանի որ բռնի հարձակումների դեպքեր չեն արձանագրվել: Այնուհանդերձ, 2011 թվականի սկզբներին մի քանի թերթերի նկատմամբ դատական որոշում է կայացվել, որով նրանցից պահանջվել է վճարել բավականին մեծ տուգանքներ, որոնք կարող են վտանգել նրանց հետագա գործունեությունը:

86. Հանձնակատարի ստացած տեղեկություններով, լրագրողների նկատմամբ բռնության և ահաբեկման դեպքերը պատշաճ չեն քննվել: 2008 թվականի նոյեմբերի 17-ին երեք անհայտ անձինք հարձակվել են «Հետաքննող լրագրողներ» հայաստանյան ՀԿ-ի նախագահ և «Հետք» առցանց լրագրի խմբագիր Էդիկ Բաղդասարյանի վրա: Ստացված տեղեկությունների համաձայն, հարձակվողները բռունցքներով և ոտքերով խփել են պարոն Բաղդասարյանին, ինչպես նաև՝ բութ առարկայով հարվածել են նրան ծոծրակի շրջանում: Չնայած որ հայաստանյան իշխանությունները դատապարտել են հարձակումը և առանց ուշացման քրեական գործ հարուցել, ստացված տեղեկությունների համաձայն այդ գործընթացում լուրջ թերություններ են արձանագրվել, որոնց հետևանքով դատարանի առջև կանգնել է երեք հանցագործներից մեկը միայն:

87. 2009 թվականի ապրիլի 30-ին «*Armenia Today*» և «Բազին ինֆո» ինտերնետային կայքերի համակարգող Արգիշտի Կիվիրյանի նկատմամբ բռնի հարձակում է տեղի ունեցել, որի հետևանքով նա շտապ տեղափոխվել է «Էրեբունի» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունք, որտեղ նրա մոտ ախտորոշել են բազմաթիվ մարմնական վնասվածքներ: Ստացված տեղեկությունների համաձայն, քննության վրա ազդել են մի քանի էական թերացումներ, ներառյալ՝ հանցավոր արարքի ոչ ճիշտ որակումը ոստիկանության կողմից և դեպքի վայրի զննության ընթացքում դրսևորված անփութությունը: Երևանի քաղաքապետի 2009 թվականի ընտրություններում տեղի են ունեցել լրագրողների նկատմամբ հարձակման և լրագրողների ահաբեկման առնվազն հինգ այլ դեպքեր:[37]

88. Հանձնակատարը ողջունում է 2010 թվականի մարտին քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունները, որոնցով խստացվել է լրագրողների մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու համար նախատեսված պատիժը (164-րդ հոդված): Ավելացվել է նոր դրույթ, որի համաձայն նույն գործողությունը պատժվում է 3-7 տարվա ազատազրկմամբ, եթե «կատարվել է լրագրողի կամ նրա մերձավորի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով»:

---

[37] *«Լրագրողների և լրատվամիջոցների նկատմամբ բռնությունները, ճնշումները և դատական գործերը Հայաստանում 2008-2009 թթ.»*, «Հետաքննող լրագրողներ» ՀԿ, Երևան, 2009 թ.:

*գ) Լրատվամիջոցների բազմակարծությունը*

89. 2001 թվականին Հայաստանի՝ Եվրոպայի խորհրդին անդամակցելուց ի վեր Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը բազմիցս պնդել է, որ Հայաստանում անհրաժեշտ է լրատվամիջոցների բազմակարծության միջավայր ձևավորել, այդ թվում՝ օրենսդրական փոփոխությունների և լիցենզավորման բաց, արդար և թափանցիկ ընթացակարգի միջոցով:

90. Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները մտահոգություններ են հայտնել այն կապակցությամբ, որ «Ա1+», «Նոյյան տապան», «ԳԱԼԱ» և «ԱԼՄ» հեռուստաալիքների անհետացման հետևանքով նվազել է հեռարձակվող լրատվամիջոցների բազմազանությունը: Զրուցակիցներից շատերը նշեցին, որ հայաստանյանն հանրությունը գնալով ավելի շատ է օգտվում առցանց լրատվամիջոցներից:

91. 2002 թվականի ապրիլին «Ա1+» հեռուստաալիքը պարտվեց մրցույթում և չստացավ հաճախականությունների տիրույթի 37-րդ ալիքով հեռարձակում իրականացնելու լիցենզիա: 2004 թվականին ԵԽԽՎ-ն նշեց, որ «արտահայտվելու և լրատվամիջոցների բազմակարծության ազատության առումով Վեհաժողովը մտահոգված է Հայաստանում տեսալսողական լրատվամիջոցների ոլորտի զարգացումներով և լուրջ կասկածներ է արտահայտում էլեկտրոնային լրատվամիջոցներում բազմակարծության առնչությամբ՝ ափսոսանք հայտնելով, մասնավորապես, որ գործող օրենքի աղոտ նորմերի պատճառով Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովին բացարձակապես հայեցողական լիազորություններ են վերապահվել հեռարձակման լիցենզիաների տրամադրման գործընթացում, մասնավորապես՝ «Ա1+» հեռուստաալիքի առնչությամբ»:[38]

92. 2002-2008 թվականներին «Ա1+»-ին ըստ էության ութ անգամ մերժել են հեռարձակման լիցենզիա տրամադրել՝ մերժելով տարբեր հաճախականությունների համար նրա ներկայացրած մրցութային հայտերը:

93. 2008 թվականի հունիսին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռեց, որ տեղի է ունեցել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում, և Հայաստանի կառավարության նկատմամբ 30,000 եվրոյի տուգանք նշանակեց «Մել տեքս ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի» գործի առնչությամբ: Դատավճռում նշվում էր, որ «դատարանը համարում է, որ լիցենզավորման այնպիսի ընթացակարգը, որի շրջանակում լիցենզավորող մարմինը չի նշում իր որոշումների պատճառները, բավարար չափով չի պաշտպանում արտահայտվելու ազատության հիմնարար իրավունքի նկատմամբ պետական մարմնի կամայական միջամտությունից»:[39]

94. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն (CM/DH) 2010 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 8 որոշման մեջ «մտահոգությամբ հիշատակեց հեռուստատեսության և ռադիոյի հեռարձակման մասին օրենքում կատարված վերջին փոփոխությունները, որոնց արդյունքում օրենքի դրույթներն այլևս ուղղակիորեն չեն պահանջում հեռարձակման լիցենզիայի մրցույթում պարտված մասնակցին կամ դիմողին ներկայացնելու որոշման պատճառները», ինչպես նաև՝ «ողջունեց Կառավարության ներկայացուցչի պաշտոնական հայտարարությունը, որի համաձայն հեռուստատեսության և ռադիոյի հեռարձակման մասին օրենքի

---

[38] Հայաստանի կողմից պարտավորությունների և հանձնառությունների կատարման վերաբերյալ ԵԽԽՎ-ի 1361 (2004) բանաձևի (27-ը հունվարի, 2004 թ.) 19-րդ պարբերություն:
[39] *«Մել տեքս» ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի*, գանգատ թիվ 32283/04, 2008 թվականի հունիսի 17-ի դատավճիռ:

49(3) հոդվածը պետք է մեկնաբանել Կոնվենցիայի 10-րդ հոդվածին համապատասխան, Մելտեքսի գործով դատավճռի լույսի ներքո՝ այնպես, որպեսզի Հանձնաժողովը մեկ որոշմամբ ներկայացնի բալային քվեարկության արդյունքների լիարժեք և պատշաճ հիմնավորումները և պատճառաբանությունը, այդ թվում՝ և մրցույթում հաղթողի, և մրցույթի բոլոր այլ մասնակիցների առնչությամբ»։[40]

95. 2010 թվականի դեկտեմբերին «Ա1+»-ը կրկին չկարողացավ հեռարձակման լիցենզիա ստանալ։ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի բոլոր անդամները՝ «2» գնահատական տված մեկ անդամի բացառությամբ, «Ա1+»-ի ներկայացրած փաթեթին տվեցին 0 գնահատական։ «Ա1+»-ից զատ, հեռարձակման լիցենզիա չստացան երկու այլ հեռուստաալիքներ՝ «ԳԱԼԱ»-ն և «ԱԼՄ»-ն։

96. ՀՌԱՀ-ը 2010 թվականի դեկտեմբերի 16-ին կայացրեց 96-Ա որոշումը «Թիվ 11 մրցույթում հաղթող ճանաչելու մասին», որում ներկայացրեց «Արմնյուզ»-ի և «Մելտեքս»-ի հայտերի վերլուծությունը և բացատրեց մրցույթում դիտարկված վեց չափորոշիչների համաձայն «Արմնյուզ»-ին 11-րդ մրցույթի հաղթող ճանաչելու մասին Հանձնաժողովի որոշման պատճառաբանությունը։ Ինչ վերաբերում է «Մելտեքս»-ի ներկայացրած հայտին, ապա ՀՌԱՀ-ի անդամները եզրակացրեցին, որ «չնայած … բազմակարծությունը խթանելու կարողության, աշխատակազմի պրոֆեսիոնալ պատրաստվածության բավարար լինելուն, դրանց, ինչպես նաև անհրաժեշտ տեխնիկական միջոցների ապահովման համար ներկայացված ֆինանսական միջոցները չեն կարող բավարար համարվել, նկատի ունենալով այն հանգամանքը, որ անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայությունը հիմնավորող փաստաթղթերի զգալի մասը կեղծ են և անհիմն»։[41]

97. «Ա1+»-ի նախագահ Մեսրոպ Մովսեսյանը հերքել է կեղծիքի առկայությունը և բացատրել, որ «Ա1+»-ը մրցութային փաթեթի մեջ ներառել էր օժանդակության վերաբերյալ ստացված բոլոր խոստումները։ Հանձնակատարի հետ հանդիպման ընթացքում պրն. Մովսեսյանը նշեց, որ նույնիսկ առանց վիճարկելի փաստաթղթերում խոստացված ֆինանսական օժանդակության, ներկայացված հայտն իրագործելու համար եղել են բավարար ֆինանսական միջոցներ։

98. Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը 2011 թվականի հունվարի 11-ին ՀՌԱՀ-ից պահանջեց նախքան 2010 թվականի հունվարի 20-ը «Ա1+»-ին տրամադրել «Արմնյուզ»-ի (մրցույթում հաղթող ճանաչված ընկերության) և «Արմենիա Թի-Վի»-ի առաջարկների փաթեթները։ «Ա1+»-ը, ուսումնասիրելով մրցակիցների ներկայացրած մրցութային առաջարկների փաթեթները, հայտարարեց, որ «Արմնյուզ»-ի հայտում հայտնաբերվել են մի քանի ակնհայտ անճշտություններ, որոնք ՀՌԱՀ-ի կողմից ըստ երևույթին չէին բացահայտվել։ «Ա1+»-ը որոշեց այդ հիմքով 2010 թվականի դեկտեմբերի 16-ին բողոքարկել ՀՌԱՀ-ի որոշումը։

*Եզրակացություններ և առաջարկություններ*

99. Հանձնակատարն ընդգծում է, որ գրպարտությունը և վարկաբեկումը պետք է ապաքրեականացվեն՝ միաժամանակ, սակայն, լրատվամիջոցներին առնչվող քաղաքացիական գործերի շրջանակում խուսափելով անողջամտորեն բարձր տուգանքներից։ Միևնույն ժամանակ, լրատվամիջոցների հանրության

[40] 1092-րդ (DH) նիստում ընդունված N°8 որոշում, 15-ը սեպտեմբերի, 2010 թ., «Մելտեքս» ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսեսյանի գործով 17/06/2008-ի դատավճիռ, ուժի մեջ է մտել 17/09/2008 թ.։

[41] «Թիվ 11 մրցույթում հաղթող ճանաչելու մասին» 96-Ա որոշում, 16-ը դեկտեմբերի, 2010 թ., ՀՌԱՀ, Երևան։

պետք է քաջալերել, որպեսզի նրանք խթանեն և կիրառեն լրագրողական էթիկայի և արհեստավարժության չափանիշները, ինչպես նաև՝ մշակեն արդյունավետ ինքնակարգավորման համակարգ:

100. Ինչ վերաբերում է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» փոփոխված օրենքի 22-րդ հոդվածի խախտման համար լիցենզիան ուժը կորցրած ճանաչելուն, ապա Հանձնակատարը համակարծիք է Եվրոպայի խորհրդի և ԵԱՀԿ-ի փորձագետների այն դիրքորոշմանը, որ նման միջոցը հավանաբար անհամաչափ կլինի և կխախտի ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածը:[42]

101. Հեռուստատեսային [հեռարձակվող] լրատվամիջոցներին տրամադրվելիք լիցենզիաների թվի կրճատումը հակասում է պետությունների՝ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածով նախատեսված այն պարտավորությանը, որի համաձայն նրանք պարտավոր են «*ապահովել, որպեսզի հանրության համար հեռուստատեսությամբ և ռադիոյով հասանելի լինի … կարծիքների և մեկնաբանությունների որոշակի տեսականի, որը կարտացոլի, ի թիվս այլ հանգամանքների, երկրում առկա քաղաքական հայացքների բազմազանությունը*».[43] Ուստի, Հանձնակատարը խորհուրդ է տալիս վերանայել այս կետը: Ավելին, հեռարձակման բոլոր ձևերի նկատմամբ ՀՌԱՀ-ի կողմից լիցենզավորման ռեժիմ սահմանելը հակասում է Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի բանաձևին, որով նախատեսվում է, որ տպագիր լրատվամիջոցներից և ինտերնետահեն լրատվամիջոցներից չպետք է պահանջել, որպեսզի նրանք գործարար գրանցման կամ հարկային հաշվառման փաստաթղթից զատ պետական այլ լիցենզիաունենան».[44]

102. Հանձնակատարը հայաստանյան իշխանություններին կոչ է անում՝ արտահայտվելու ազատությանը և լրատվամիջոցների ազատությանն առնչվող միջազգային և եվրոպական չափանիշներին համահունչ վերանայելու ազգային իրավական դաշտը: Այս առումով նրանք պետք է ըստ պատշաճի հաշվի առնեն ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գլխավորած աշխատանքային խմբի ներկայացրած առաջարկները:

103. Ինչպես նշվել է Եվրոպայի խորհրդի և ԵԱՀԿ-ի փորձագետների կողմից, Հանրային հեռուստատեսության և ռադիոյի խորհրդի անդամների ընտրության և նշանակման համակարգը պետք է բարեփոխել՝ հանրային հեռարձակման բազմակարծությունը հնարավոր դարձնելու նպատակով: Նշանակման համապատասխան ընթացակարգերը պետք է նաև միտված լինեն Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի անդամության բազմակարծության ապահովմանը և փաստացի ապահովեն այդ արդյունքը: Բացի այդ, Հանձնակատարը վերհիշում է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականը «Հեռարձակման ոլորտը կարգավորող մարմինների անկախության և գործառույթների մասին»,[45] որում շեշտադրվում է լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող մարմնի անդամների անկախությունը քաղաքական միջամտությունից և տնտեսական շահերից: ՀՌԱՀ-ին և Հանրային հեռուստատեսության և ռադիոյի խորհրդին առնչվող իրավական նորմերը և պրակտիկան պետք է

---

[42] Պատիժների համաչափության վերաբերյալ տես, օրինակ, Dammann-*ն ընդդեմ Շվեյցարիայի*, գանգատ թիվ 77551/01, 2006 թվականի ապրիլի 25-ի դատավճիռ:
[43] Manole-*ը և ուրիշներն ընդդեմ Մոլդովայի*, գանգատ թիվ 13936/02, 2009 թվականի սեպտեմբերի 17-ի դատավճիռ:
[44] Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 1636 (2008) բանաձևը «*Ժողովրդավարություններում լրատվամիջոցների ցուցանիշների մասին*», 8.15 պարբերություն:
[45] Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Rec(2000)23 հանձնարարականը «Հեռարձակման ոլորտը կարգավորող մարմինների անկախության և գործառույթների մասին»:

լիարժեքորեն արտացոլեն Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականը:

104. Հանձնակատարն առաջարկում է, որպեսզի երկրի քաղաքական առաջնորդները հստակ ուղերձ հղեն՝ նշելով, որ լրագրողների նկատմամբ բռնությունը և ահաբեկումն անընդունելի են և պատշաճ կերպով պատժվելու են: Ընտրությունների հարող ժամանակաշրջանում դրա կարևորությունն էլ ավելի է մեծանում: Լրագրողների նկատմամբ բռնության դեպքերի արդյունավետ քննությունն առանցքային նշանակություն ունի. դա չանելը կարող է միայն խրախուսել անպատժելիությունը մարդու իրավունքների խախտումների համար:

105. Հանձնակատարն ի գիտություն է ընդունում ՀՌԱՀ-ի ներկայացրած այն պատճառաբանությունը, որ ֆինանսական միջոցների ենթադրյալ անբավարարությունը լրջորեն վտանգել է «Մելտեքս»-ի ողջ հայտի իրագործելիությունը:

106. Հանձնակատարը որոշակի մտավախություն ունի հաճախականությունների բաշխման ընթացակարգում կիրառված մեթոդաբանության առնչությամբ: Նա գտնում է, որ չափորոշիչներից յուրաքանչյուրին[46] պետք է տալ առանձին գնահատական, և որ այդ մանրամասները պետք է հրապարակել: ՀՌԱՀ-ի կողմից որոշումների կայացման կարգը և դրանց համար ներկայացված պատճառաբանությունը որոշակի հիմնավոր կասկածներ են հարուցում մրցույթի արդարացիության կապակցությամբ: Նման ընթացակարգի հիմնական նպատակներից մեկը պետք է լինի լրատվամիջոցների բազմակարծության սկզբունքի ապահովումը:

107. Տեսալսողական լրատվամիջոցների տիրույթի բազմակարծության սկզբունքը ենթադրում է, որ գոյություն ունեն տարաբնույթ լրատվամիջոցներ, որոնք միասին վերցված ապահովում են, որպեսզի տարբեր, ներառյալ՝ փոքրամասնությունների և քաղաքական ընդդիմադիրների կարծիքները, տեսակետները և տեղեկությունները հնարավոր լինի ներկայացնել լայն լսարանի ուշադրությանը: Իսկապես, ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններից պահանջում է «*ապահովել, որպեսզի հանրության համար հեռուստատեսությամբ և ռադիոյով հասանելի լինի … կարծիքների և մեկնաբանությունների որոշակի տեսականի, որը կարտացոլի, ի թիվս այլ հանգամանքների, երկրում առկա քաղաքական հայացքների բազմազանությունը*»:[47] Հանձնակատարը ցանկանում է ընդգծել, որ այդ պարտավորությունը կիրառելի է նաև հեռարձակվող լրատվամիջոցների լիցենզավորման որոշումները կայացնելիս: Այս առումով հատկապես կարևոր է, որպեսզի եթեր ունենալու հնարավորություն ընձեռվի միմյանց փոխլրացնող լրատվամիջոցների: Լիցենզավորման ընթացակարգերում և որոշումներում պետք է լրջորեն հաշվի առնել տարբեր լրատվամիջոցների կողմից ներկայացվող «ձայների» և թեմաների բազմազանությունը: Լրատվամիջոցների կողմից ներկայացվող նյութի բազմազանությունն էականորեն նպաստում է բնակչության շրջանում քննադատական մտածողության ձևավորմանը, որն առանձնակի կարևորություն է ձեռք բերում ընտրությունների հարող ժամանակաշրջաններում: Ինչպես ՄԻԵԴ-ը հայտարարել է, ժողովրդավարություն չի կարող գոյություն ունենալ

[46] Չափորոշիչներն են՝ արտադրվող ծրագրերի ծավալը, բիզնես պլանը, բազմակարծություն ապահովելու կարողությունը, տեխնիկական միջոցները և սարքավորումները, աշխատողների արհեստավարժությունը և կարողությունները:

[47] *Manole-ը և ուրիշներն ընդդեմ Մոլդովայի*, գանգատ թիվ 13936/02, 2009 թվականի սեպտեմբերի 17-ի դատավճիռ:

առանց բազմակարծության, հատկապես՝ արտահայտվելու ազատության բնագավառում:[48]

## 2. Հավաքների ազատություն

108. Հանձնակատարը 2007 թվականի գնահատողական այցի ժամանակ նշել էր, որ խաղաղ հավաքների իրավունքի խախտումները կասկածի տակ են դնում ժողովրդավարական արժեքներին կառավարության հավատարմությունը, և որ պետք է վերջ տալ նման խախտումներին:[49]

109. Հավաքների և ցույցերի մասին 2004 թվականի օրենքը 2008 թվականի մարտի իրադարձություններին անմիջապես հաջորդած իրավիճակում փոփոխվել էր՝ խստացնելով սահմանափակումները: Եվրոպայի խորհրդի Վենետիկյան հանձնաժողովի և ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի համատեղ եզրակացության հիման վրա օրենքում կրկին փոփոխություններ կատարվեցին՝ նպատակ հետապնդելով այն առավել համապատասխանեցնել միջազգային չափանիշներին: Այնուհանդերձ, դեռևս պահպանվում են որոշակի մտահոգություններ այն դրույթների կապակցությամբ, որոնք պարունակում են խաղաղ հավաքների ազատության չհիմնավորված և ավելորդ սահմանափակումներ: Այդպիսին է, օրինակ, օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետը, որով նախատեսվում է, որ զանգվածային միջոցառումը կարող է արգելվել, եթե ոստիկանությունը կամ ազգային անվտանգության ծառայությունը ներկայացրել է եզրակացություն առ այն, որ առկա է անմիջական սպառնալիք կամ իրական վտանգ անվտանգությանը, հասարակական կարգին, այլոց սահմանադրական իրավունքներին ու ազատություններին և այլն: Ավելին, վերոհիշյալ դրույթի մեջ չի կոնկրետացվում, թե արդյոք ոստիկանության կամ ազգային անվտանգության ծառայության ներկայացրած եզրակացության հիմքում դրված տեղեկությունները պետք է հասանելի լինեն ցույցի կազմակերպիչներին, կամ՝ արդյոք այդ եզրակացությունը կարող է բողոքարկվել:

110. Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը Նախագահի աշխատակազմի համագործակցությամբ մշակել է «Հավաքների մասին» նոր օրենքի նախագիծ: Օրենքի նախագիծը 2010 թվականի դեկտեմբերին վերանայվել է Վենետիկյան հանձնաժողովի և ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի կողմից: Փորձագետները եզրակացրել են, որ օրենքի նախագիծը մեծ մասամբ համապատասխանում է միջազգային չափանիշներին: Այնուամենայնիվ, Վենետիկյան հանձնաժողովը և ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ը որոշ առաջարկություններ են ներկայացրել հետևյալի վերաբերյալ. հավաքների արգելքը որոշակի վայրերում, որոնք պետք է հստակորեն նախատեսել և սահմանափակել, ծանուցման՝ թույլատրության համակարգի հավասարազոր չլինելու հանգամանքը, դատական վերանայման առավել լիարժեք կանոնակարգվածությունը և ոստիկանության կողմից կիրառվող թույլատրելի հատուկ միջոցների սահմանումը և դրանց օգտագործման սահմանափակումը:

111. Օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ կետի առնչությամբ միջազգային փորձագետները նշել են, որ սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով հավաքների ազատությունն օգտագործելու բացարձակ արգելքը պետք է նախապայմանավորել բռնության անմիջական սպառնալիքի գոյությամբ: 19-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և 4-րդ մասը կարող են խնդրահարույց լինել, քանի որ

---

48 *Նույն տեղում:*

49 Մարդու իրավունքների հանձնակատար պրն. Թոմաս Համարբերգի Հայաստան կատարած այցի (7-11-ը հոկտեմբերի, 2007 թ.) վերաբերյալ զեկույցը, CommDH(2008)4:

բացարձակ իմաստով արգելում են հավաքների կազմակերպումը «Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, կառավարության նստավայրերից, դատարաններից այնպիսի հեռավորության վրա, որը սպառնում է դրանց բնականոն գործունեությանը»: Միջոցառումից յոթ օր առաջ պահանջվող ծանուցման ժամկետն արտառոց երկար է:[50] Զրուցակիցներից մի քանիսը Հանձնակատարին տեղեկացրեցին, որ ակնկալվում է նոր օրենքի նախագծի քննարկումը և մոտ ապագայում ընդունումն Ազգային ժողովի կողմից: «Հավաքների մասին» նոր օրենքն ընդունվեց Ազգային ժողովի կողմից 2011 թվականի ապրիլին:

112. Քաղաքացիական հասարակության սուբյեկտները լուրջ մտահոգություններ են հնչեցրել խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրացման, մասնավորապես՝ հրապարակային վայրերում իրացման առնչությամբ: Ստացվել են որոշակի տեղեկություններ այն մասին, որ Երևանի կենտրոնում երթերը և ցույցերը, որոնք հիմնականում կազմակերպվում են ընդդիմադիր ուժերի կողմից, հաճախ արգելվում էին: Մասնավորապես, Երևանի Ազատության հրապարակում ցույցեր անցկացնելու մասին ընդդիմադիր կուսակցությունների դիմումները համակարգված կերպով մերժվել են Երևանի քաղաքապետարանի կողմից: Եղել են նաև ընդդիմության մեծամասշտաբ ցույցերին մասնակցելու նպատակով Երևան ուղևորվողների տեղաշարժի ազատության սահմանափակման դեպքեր:[51] Չնայած դրան, որոշ դեպքերում հանդուրժվել են չթույլատրված ցույցերը, որոնք ընդհանուր առմամբ ընթացել են առանց պատահարների: Հանձնակատարն ուրախությամբ նկատեց, օրինակ, որ 2011 թվականի մարտին կազմակերպիչների և ոստիկանության միջև բանակցություններից հետո թույլատրվել էր ընդդիմության կազմակերպած երկու ցույցերի անցկացումն Ազատության հրապարակում:

113. Մտահոգիչ հաջորդ միտումը 2008 թվականի մարտից ի վեր փակ շինություններում անցկացվող հավաքների խոչընդոտումն է: Իրավապաշտպան մի քանի կազմակերպություններ և անհատներ նշեցին, որ իրենց թույլ չի տրվել օգտվել մասնավոր տարածքներից, օրինակ՝ հյուրանոցների կոնֆերանս-դահլիճներից, ինչը երբեմն տեղի է ունեցել վերջին պահին, ըստ երևույթին՝ այն պատճառով, որ չափազանց զգայուն են եղել քննարկվող թեմաները, որոնք առնչվել են մարդու իրավունքներին և երկրում տիրող քաղաքական իրավիճակին: ՀԿ-ները և իրավապաշտպանները նշել են, որ այդ խոչընդոտները հիմնականում իշխանությունների տված հրահանգների հետևանք են եղել:

114. ՄԻԵԴ-ը երեք գործերով[52] արձանագրել է ՄԻԵԿ-ի 11-րդ հոդվածի խախտում:[53] *Հայաստանի Հելսինկյան կոմիտեն ընդդեմ Հայաստանի* գործը վերաբերում է 2008 թվականի մարտին հաջորդած իրավիճակում Երևանում հրապարակային բոլոր հավաքների արգելմանը և քաղաքապետի որոշումները վիճարկելու արդյունավետ իրավական միջոցի բացակայությանը:

---

50 Վենետիկյան հանձնաժողովի և ԺՀՄԻԳ-ի համատեղ միջանկյալ եզրակացությունը «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ, CDL-AD(2010)049, 22-ը դեկտեմբերի, 2010 թվական:

51 «Խաղաղ հավաքների ազատության մոնիթորինգ Հայաստանում», Հայաստանի Հելսինկյան կոմիտե, Երևան, 2009 թ.:

52 *Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի*, գանգատ թիվ 6562/03, 2007 թվականի հունվարի 11-ի դատավճիռ, *Գալստյանն ընդդեմ Հայաստանի*, գանգատ թիվ 26986/03, 2007 թվականի նոյեմբերի 15-ի դատավճիռ, և *Աշուղյանն ընդդեմ Հայաստանի*, գանգատ թիվ 33268/03, 2008 թվականի հուլիսի 17-ի դատավճիռ:

53 *Հայաստանի Հելսինկյան կոմիտեն ընդդեմ Հայաստանի*, գանգատ թիվ 59109/08, ուղարկվել է 2008 թվականի նոյեմբերի 10-ին, ծանուցվել՝ 2010 թվականի հունվարի 27-ին:

115. Հանձնակատարը սատարում է հայաստանյան իշխանությունների ջանքերը՝ ուղղված մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համահունչ հավաքների ազատության մասին գործող իրավական դաշտում փոփոխություններ կատարելուն։ Նա ընդգծում է, որ օրենքում պետք է պատշաճ կերպով արտացոլված լինեն Վենետիկյան հանձնաժողովի և ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի հանձնարարականները, և որ պետք է ըստ պատշաճի հաշվի առնել այս առնչությամբ քաղաքացիական հասարակության սուբյեկտների արտահայտած կարծիքները։

116. Հանձնակատարը գտնում է, որ պետք է անհապաղ վերջ տալ խաղաղ հավաքների, ներառյալ՝ իշխանություններին քննադատող հավաքների անօրինական և անհամաչափ արգելքներին, ինչպիսիք են, օրինակ, որոշակի վայրերում հավաքների անցկացման համակարգված արգելումը, տրանսպորտային միջոցների շարժի սահմանափակումը հավաքներին մարդկանց մասնակցությունը կանխելու նպատակով, ինչպես նաև՝ թռուցիկներ բաժանող ընդդիմադիր ակտիվիստների ձերբակալումը։ Հույժ կարևոր է, որպեսզի ոստիկանական ուժերի վարքը և գործողությունները հավաքների, հատկապես՝ զգայուն հավաքների ընթացքում, մնա արհեստավարժ և օրինական՝ նպատակ հետապնդելով երաշխավորել խաղաղ հավաքների ազատության իրավունքը։

117. Արտահայտվելու ազատությունը և խաղաղ հավաքների ազատությունը հնարավորություն են ընձեռում, որպեսզի քննադատական «ձայները» ժողովրդավարական միջոցներով հնչեցնեն իրենց տարբերվող կարծիքները։ Այդ կերպ, բռնի առճակատման նկատմամբ կարող է գերակայել երկխոսությունը։ Հանձնակատարն այն կարծիքի է, որ լրատվամիջոցների բազմակարծությունը և խաղաղ, այդ թվում՝ քննադատական ուղերձ հնչեցնող հավաքների անցկացումը պետք է երաշխավորված լինի պետության կողմից։

## 3. Միավորվելու ազատությունը

118. Հանձնակատարի ուշադրությանը ներկայացվել է այն հանգամանքը, որ 2009 թվականին Հայաստանի կառավարության հավանությանն արժանացած՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխությունների նախագիծը լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս, քանի որ դրանց կիրառությունն էապես կծանրաբեռնի ՀԿ-ների գործունեությունը, իսկ որոշ դեպքերում՝ կարգելակի նրանց աշխատանքը։ Փոփոխությունների արդյունքում, օրինակ, կընդլայնվի այն դեպքերի շրջանակը, որոնցում հասարակական կազմակերպությունը պարտավոր կլինի վերագրանցման համեմատաբար բարդ ընթացակարգ անցնել (օրինակ՝ հասցեի կամ կազմակերպության ղեկավարի փոփոխություն և այլն)։ Ավելին, փոփոխություններով հասարակական կազմակերպություններից պահանջվելու է գործունեության և ֆինանսական միջոցների մասին տարեկան հաշվետվություններ ներկայացնել, որոնցում կբացահայտվեն ֆինանսավորման աղբյուրները, ընդ որում՝ այդ հաշվետվությունները պետք է տպագրել հազար օրինակով։ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի փորձաքննության արդյունքների համաձայն, փոփոխությունների նախագծի որոշ դրույթներ համահունչ չեն միջազգային համապատասխան չափանիշներին և հավասարազոր են ՀԿ-ների գործունեության նկատմամբ ավելորդ միջամտության։[54] 2010 թվականի սեպտեմբերի 23-ին տեղի ունեցան «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխությունների նախագծի խորհրդարանական լսումները։

[54] «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի եզրակացությունը, Վարշավա, 2009 թվականի դեկտեմբեր։

119. Հանձնակատարն արդարադատության նախարարի հետ քննարկեց ՀԿ-ների սուր քննադատությանն արժանացած ևս մեկ հարց: Ազգային ժողովի Մարդու իրավունքների հանձնաժողովը քննարկել է կառավարության 2010 թվականի օգոստոսի 5-ի որոշումն արդարադատության նախարարության կազմում իրավաբանական անձանց գործունեության օրինականությունը վերահսկող նոր տեսչություն ստեղծելու մասին: ՀԿ-ների ներկայացուցիչները մտահոգություն են հայտնել այն մասին, որ նշված որոշմամբ կառավարությունը կարող է փորձել լրացուցիչ հսկողություն հաստատել իրենց գործունեության նկատմամբ: Արդարադատության նախարարությունը բացատրեց, որ տեսչության ստեղծման նպատակն առնչվում է ոչ առևտրային կազմակերպությունների որոշ տեսակների և չի միջամտելու ՀԿ-ների գործունեությանը.[55] Արդարադատության նախարարը նշեց, որ տեսչության ստեղծման նպատակն է ապահովել համապատասխան կազմակերպությունների հաշվետու գործելակերպը:

120. Հանձնակատարն ընդգծում է, որ պետությունը չպետք է անհամաչափորեն միջամտի քաղաքացիական հասարակության հատվածի աշխատանքին և գործունեությանը:

## III. Մարդու իրավունքների իրավիճակը բանակում

121. Հանձնակատարը 2007 թվականին Հայաստան կատարած այցի վերաբերյալ զեկույցում անդրադարձել էր բանակում մարդու իրավունքների իրավիճակի հիմնախնդրին: Առաջարկությունների մեջ նա կոչ էր արել լիարժեքորեն քննել սպանության և դաժան վերաբերմունքի դեպքերը, ինչպես նաև՝ պատժել մեղավորներին: Նա նաև խորհուրդ էր տվել էլ ավելի խթանել զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը:

122. Հանձնակատարը նաև պարզել էր, որ «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքը չի ապահովում իսկապես քաղաքացիական ծառայություն, քանի որ այն նախկինի պես վերահսկվում էր զինվորական կառույցների կողմից: Ըստ երևույթին, հիմնականում այդ պատճառով էին խղճի հիման վրա զինվորական ծառայությանն առարկող անձինք, ովքեր հիմնականում Եհովայի վկաների համայնքի անդամներ են, հրաժարվում օրենքով նախատեսված այլընտրանքային ծառայություն կատարելուց: Այդ համատեքստում Հանձնակատարը խորհուրդ էր տվել ազատ արձակել խղճի հիման վրա զինվորական ծառայությանն առարկելու համար ազատազրկված անձանց, ինչպես նաև՝ լուծել ազատվելուց հետո նրանց առջև ծառացող գործնական պրոբլեմները, օրինակ՝ հաշվառման փաստաթղթեր չունենալու խնդիրները.[56]

---

[55] Եվրոպայի խորհրդի տեղի գրասենյակի հաշվետվություն, DPA/Inf(2010)33, 15-ը հոկտեմբերի, 2010 թ.:

[56] Մարդու իրավունքների հանձնակատար պրն. Թոմաս Համարբերգի Հայաստան կատարած այցի (7-11-ը հոկտեմբերի, 2007 թ.) վերաբերյալ զեկույցը, CommDH(2008)4:

## 1. Բռնարարքները բանակում

123. Ստեղծման օրվանից ի վեր Հայաստանի բանակում բազմիցս արձանագրվել են բռնարարքներ և դաժան վերաբերմունքի տարբեր ձևեր, ինչպես նաև՝ ոչ մարտական իրավիճակներում մահվան դեպքեր: Քաղաքացիական հասարակության սուբյեկտները և մարդու իրավունքների ակտիվ պաշտպանները Հանձնակատարին տեղեկացրեցին, որ բանակում լայն տարածում գտած սովորույթները, որոնք ներկայացված տվյալների համաձայն նպաստել են բանակային որոշ հրամանատարների անպատժելիությանը, կոռուպցիային և դեպի բանակ հանցավոր գործելակերպի ներթափանցմանը, կենցաղային անբավարար պայմանների, մասնավորապես՝ սննդի և հագուստի անբավարարության խնդրի հետ մեկտեղ, նպաստել են զինված ուժերում մարդու իրավունքների՝ մարտական գործողություններին չառնչվող լուրջ խախտումների առաջացմանը:

124. Մարդու իրավունքների պաշտպանը 2009 թվականին հրապարակեց «Մարդու իրավունքների պաշտպանություն Հայաստանի Հանրապետության զինված ուժերում կարգապահական քաղաքականություն իրականացնելիս» խորագրով արտահերթ զեկույցը, որում մատնանշված էին արտականոնադրական հարաբերությունների, հրամանատարների և զորակոչիկների կողմից չարաշահման և խախտումների դեպքերը, ինչպես նաև՝ մեղավորներին պատասխանատվության չենթարկելու երևույթները: Զեկույցում նաև նշվում էին դաժան վերաբերմունքի և չարաշահումների դեպքերը չարձանագրելու, առողջական խնդիրների պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի անձանց զորակոչելու, ինչպես նաև՝ վերոհիշյալ բոլոր դեպքերի վերաբերյալ տեղեկությունների ոչ բավարար հասանելիության երևույթները.[57]

125. Պաշտպանության նախարարը Հանձնակատարին հայտնեց, որ կարգապահական տույժերը և մեկուսացումը պետք է օգտագործվեն որպես «վերջին ատյանի» միջոցներ, և որ կարգապահական տույժի նշանակմանը պետք է նախորդի ներքին քննություն:

126. Այնուամենայնիվ, Հանձնակատարի ստացած որոշ տեղեկություններով, մեկուսացման կարգապահական տույժի կիրառությունը համեմատաբար լայն տարածում ունի հայաստանյան զինված ուժերում: Կարգապահական պատիժների և մեկուսացման կրման պայմանների մոնիթորինգի արդյունքում «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հայաստանյան հասարակական կազմակերպությունը եզրակացրել է, որ ենթադրյալ կարգապահական իրավախախտումների դեպքում, ինչպես նաև՝ կարգապահական տույժեր կիրառելիս գործնականում որևէ քննություն չի իրականացվում: Միևնույն իրավախախտման համար հրամանատարները նշանակում են խիստ տարբեր տույժեր: Դա համահունչ չէ ներպետական

57 «Մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում կարգապահական քաղաքականություն իրականացնելիս» արտահերթ զեկույց, Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպան, 2009 թ.: Նախկին զինվորական դատախազը նշել է, որ 2009 թվականի առաջին 11 ամիսների ընթացքում 38 զինծառայողներ դատապարտվել են արտականոնադրական հարաբերությունների համար: Եվս 45 գործերի դատական քննությունը շարունակվում է: 2010 թվականի պաշտոնական տվյալներն ըստ երևույթին վկայում են այն մասին, որ 176 զինծառայողներ դատապարտվել են արտականոնադրական հարաբերությունների համար, և տարվա վերջի դրությամբ ընթացքի մեջ է եղել ևս 12 գործերի դատական քննությունը (հղումը վերոհիշյալ տեղեկություններին տրված է ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատուժի բյուրոյի՝ Հայաստանում մարդու իրավունքների վերաբերյալ 2009 և 2010 թվականների զեկույցներում):

իրավական նորմերին[58] և խախտում է անմեղության կանխավարկածի սկզբունքը: Բնականաբար, եթե կարգապահական տույժերը կարող են նշանակվել բանավոր կարգով, ապա դա կարող է հանգեցնել հրամանատարների կողմից տույժերի նշանակման չարաշահումների: Ավելին, ստացված տեղեկությունների համաձայն, զանգատարկման անկախ մարմնի (օրինակ՝ հրամանատարի վերադասի փոխարեն օրինական դատարանի) բողոքելու՝ զինծառայողների իրավունքը գործնականում արդյունավետորեն չի երաշխավորվում:

127. Քաղաքացիական հասարակության ինստիտուտի հաշվետվության համաձայն, կարգապահական մեկուսարաններում պահվող անձանց ընդհանուր առմամբ չի թույլատրվում հաղորդակցվել արտաքին աշխարհի հետ: Ինչ վերաբերում է ազատազրկման պայմաններին, ապա մեկուսացման կարգապահական տույժ ստացողներին որպես կանոն չի տրամադրվում սպիտակեղեն, իսկ լոգանքի հնարավորություն ընձեռվում է մեկուսացման առաջին յոթ օրերից հետո միայն:[59]

128. Պաշտպանության նախարարը Հանձնակատարին տեղեկացրեց, որ ընթանում է բանակի կարգապահական կանոնակարգերի վերանայումը, որի նպատակն է ուղղել վերոհիշյալ թերությունների մի մասը և նվազեցնել զինված ուժերում տեղի ունեցող խախտումների քանակը, այդ թվում՝ ոչ մարտական իրավիճակներում մահացության և ծանր բռնության այլ դեպքերը: Նախարարը նաև նշեց, որ կարգապահական նոր կանոնակարգերը կհանգեցնեն «կարգապահական մեկուսարանների» վերացմանը, և որ ապագայում կարգապահական տույժերը կնշանակվեն կարգապահական գումարտակներում խստացված դաստիարակչական միջոցառումների տեսքով: Մարդու իրավունքների միջազգային չափանիշների պահպանման մակարդակը բարելավելու նպատակով ԺՀՄԻԳ-ը մեկնաբանություններ է ներկայացրել զինված ուժերի կարգապահական կանոնագրքի մասին օրենքի նախագծի վերաբերյալ: Մասնավորապես, ԺՀՄԻԳ-ը խորհուրդ է տվել պարզաբանել հետևյալ խնդիրները. հնարավոր կարգապահական խախտումների և համապատասխան պատիժների թվարկումը, կարգապահական պատասխանատվության և քրեական պատասխանատվության փոխհարաբերությունը, կարգապահական ծանր խախտումների տարրերը, կարգապահական և քրեական քննությունների անցկացումը և դրանց փոխհարաբերությունը, տույժերի նշանակումը, զանգատները և բողոքները (վերադաս մարմնի, դատարան կամ մարդու իրավունքների պաշտպանին):[60]

129. Հանձնակատարը հասկանում է, որ վերջին տարիներին նվազել է հայկական բանակում ոչ մարտական իրավիճակներում մահացության դեպքերի թիվը: Այնուամենայնիվ, նման դեպքերի վերաբերյալ վիճակագրական տվյալների առնչությամբ շարունակվում է տարակարծությունը, և քաղաքացիական հասարակության սուբյեկտները բողոքում են այդ առնչությամբ արժանահավատ պաշտոնական տեղեկությունների բացակայությունից:

130. Պաշտպանության նախարարն ընդունեց, որ զինված ուժերում կան բռնության և իրավախախտումների դեպքեր: Նա ընդգծեց սպաների և զորակոչիկների իրավաբանական և մարդու իրավունքների վերաբերյալ կրթությունը բարելավելու կարևորությունը: Իրավապաշտպան

---

[58] Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագրքով նախատեսվում է, որ նշանակվող պատիժը որոշելու համար պետք է անցկացվի քննություն:

[59] «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ենթակայության տակ գտնվող կայազորային կարգապահական մեկուսարաններում և կարգապահական գումարտակում պահվող ազատությունից զրկված անձանց պահման պայմանները», «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ, Երևան, 2010 թ.:

[60] «Զինված ուժերի կարգապահական կանոնագրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ եզրակացություն, ԺՀՄԻԳ, Վարշավա, 17-ը հունվարի, 2011 թ.:

կազմակերպությունները նույնպես ընդգծեցին այդ սկզբունքը՝ նշելով, որ իրավաբանական և մարդու իրավունքների վերաբերյալ կրթությունը բարելավելը կքաջալերի իրավունքների խախտումներից տուժածներին՝ օգտվելու բողոքարկման մեխանիզմներից։ Նախարարը նաև ընդգծեց, որ հույժ կարևոր է հանցագործությունների և իրավախախտումների լուրջ քննությունը, ինչպես նաև՝ դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը հանրությանը։

131. 2010 և 2011 թվականներին քաղաքացիական հասարակության սուբյեկտները և լրատվամիջոցները շարունակել են տեղեկություններ հաղորդել բանակում խիստ դաժան վերաբերմունքի և մահվան մի քանի դեպքերի վերաբերյալ։

132. 2010 թվականի հուլիսի ընթացքում ոչ մարտական իրավիճակում բռնության պատճառով զոհվել են հայկական բանակի յոթ զինծառայողներ։[61] Դեպքերից մեկը վերաբերում էր Տավուշի մարզում տեղակայված զորամասի պայմանագրային զինծառայող Արտակ Նազարյանի մահվանը։[62] Հանձնակատարը հանդիպեց զոհվածի մոր հետ։ Քննությունը եզրահանգել էր, որ նրան դրդել են ինքնասպանության, մինչդեռ ընտանիքը կարծում է, որ տեղի է ունեցել դիտավորյալ սպանություն՝ հաշվի առնելով մարմնի վրա հայտնաբերված բազմաթիվ մարմնական վնասվածքները և քննության մեջ արձանագրված որոշակի լուրջ շեղումները։ Դատական փորձաքննությամբ հաստատվել էր մահվանից առաջ պրն. Նազարյանին ծանր մարմնական վնասվածքներ պատճառելու հանգամանքը։ Պրն. Նազարյանի ազգականները նշեցին, որ տուժածը բարդ հարաբերությունների մեջ է եղել զորամասի հրամանատարի և հրամանատարի տեղակալի հետ։ Սպաներից մեկը (հրամանատարի տեղակալը) և չորս զորակոչիկներ ձերբակալվել են պրն. Նազարյանի նկատմամբ դաժան վերաբերմունքի և նրան ինքնասպանության հասցնելու համար։ Հանձնակատարին հասած տեղեկություններով, հրամանատարը պատասխանատվության չի ենթարկվել։

133. 2010 թվականի հոկտեմբերի սկզբներին զորամասերից մեկի նկուղում կախված վիճակում հայտնաբերվեց 18-ամյա զինվորի դին։ Տուժողին պարբերաբար ծեծելու և նվաստացնելու կասկածով ձերբակալվեցին մեկ սպա և վեց զինվորներ։ 2010 թվականի նոյեմբերին հիվանդանոց տեղափոխվեց երիտասարդ մի զորակոչիկ, ով ստացված որոշ տեղեկությունների համաձայն դաժան ծեծի էր ենթարկվել Նուբարաշենի զորամասի հրամանատարի կողմից, ով նախկինում արդեն մեղադրվել էր մեկ այլ զինվորի նկատմամբ դաժան վերաբերմունք դրսևորելու մեջ։ 2010 թվականի նոյեմբերի սկզբին այդ հրամանատարը ձերբակալվեց և առաջին դեպքի համար դատապարտվեց 2.5 տարվա ազատազրկման։ 2011 թվականի հունվարին զորամասում վեճից հետո գլխին ստացած ծանր վնասվածքներից քաղաքացիական մեկ անձի մահվան դեպքից հետո պաշտպանության նախարարը պաշտոնից ազատեց Տավուշի զորամասերից մեկի հրամանատար գնդապետ Սերգեյ Կարապետյանին։

134. Հանձնակատարը հանդիպեց ոչ մարտական իրավիճակներում զոհված զինվորների ազգականներին։ Նրանք բոլորն անվստահություն հայտնեցին քննության գործընթացների և արդյունքների նկատմամբ՝ պնդելով, որ փորձաքննությունների մեջ եղել են շեղումներ, սպանությունները կոծկվել են՝ ներկայացվելով որպես ինքնասպանություն, և այլն։

[61] 2010 թվականի օգոստոսի սկզբներին պաշտպանության նախարարությունը հայտարարել է, որ կարգապահական տույժի է ենթարկել զորամասերի հրամանատարների և հրամանատարների տեղակալների, ինչպես նաև՝ այլ սպաների։

[62] Ստացված որոշ տեղեկությունների համաձայն, 2010 թվականի հուլիսի 28-ին Մարտունու շրջանի զորամասում (Լեռնային Ղարաբաղ) 21-ամյա Կարո Այվազյանը կրակելով սպանել է հինգ զինծառայողների, ապա՝ կրակել ինքն իրեն։

Ազգականներն ընդգծում էին, որ քննության և վերջինիս նյութերի հասանելիությունն իրենց համար խիստ սահմանափակ է եղել:

135. Հանձնակատարը նաև հանդիպեց նորանշանակ զինվորական դատախազ Գնորգ Կոստանյանին, ով նշեց, որ ուսումնասիրում է իր կառույցին ներկայացված բոլոր դեպքերը և բողոքները: Նա մտահոգություն հայտնեց այն հանգամանքի կապակցությամբ, որ զինվորական ոլորտ ներթափանցող հանցավոր գործելակերպը կարող է բացասական հետևանքներ ունենալ հասարակությունում, քանի որ հանցավոր արարքները կվերարտադրվեն զինվորների՝ քաղաքացիական կյանքի վերադառնալուց հետո: Ավելին, զինվորական դատախազը համարում է, երկրի անվտանգության զգայուն իրադրության պարագայում էլ ավելի կարևոր է ապահովել կարգապահության, վստահության և կարգուկանոնի գերակայությունը, ինչպես նաև՝ իրավախախտումների մեղավորներին պատասխանատվության ենթարկելը: Պրն. Կոստանյանն ընդգծեց, որ ուսումնասիրվում են խնդրահարույց համարվող դեպքերը, և որ ինքը չի բացառում համապատասխան հիմքերի առկայության դեպքում որոշակի գործերով քննության վերաբացումը:

136. ՄԻԵԴ-ին էր[63] ներկայացվել *Զալյանը, Սարգսյանը և Սերոբյանն ընդդեմ Հայաստանի* գործը, որի վերաբերյալ ՄԻԵԴ-ը կայացրել էր գանգատն ընդունելի ճանաչելու մասին մասնակի որոշում: Տվյալ գործը վերաբերում է հետևյալ բողոքներին. ապօրինի ազատազրկում, անհրաժեշտ բուժօգնության չտրամադրում, խոշտանգումներ և դաժան վերաբերմունք, ինչպես նաև՝ Լեռնային Ղարաբաղում երկու հայ զինվորների մահվան հանգամանքների (2004 թվական) քրեական գործի վարույթի ընթացքում արդյունավետ քննության չապահովում: Հայաստանում տվյալ գործի վարույթը դեռևս չի ավարտվել, չնայած որ գանգատվողները վճռաբեկ դատարանի որոշման հիման վրա ազատ են արձակվել:

*Եզրակացություններ և առաջարկություններ*

137. Հանձնակատարին խորապես մտահոգում են հայկական բանակում տեղի ունեցող՝ ոչ մարտական իրավիճակներում մահացության, խոշտանգումների և դաժան վերաբերմունքի դեպքերը: Նա կոչ է անում հայաստանյան իշխանություններին լիարժեքորեն ի գիտություն ընդունել այդ երևույթի գոյության փաստը և անհապաղ ու արդյունավետ քննության միջոցով լրացուցիչ ջանքեր գործադրել մեղավորների և պատասխանատու հրամանատարների անպատժելիությանը վերջ դնելու ուղղությամբ: Հանձնակատարը կարծում է, որ անհրաժեշտ է, որպեսզի երկրի բարձրագույն ղեկավարությունը հաստատուն և ուժեղ քաղաքական կամք դրսևորի նման գործելակերպը վերացնելու ուղղությամբ, որը ոչ միայն խախտում է մարդու իրավունքները, այլ նաև՝ նսեմացնում բանակի պատիվը:

138. Հանձնակատարը հասկանում է, որ բռնությունից տուժած զորակոչիկները և սպաները վախենում են դրանց մասին հաղորդումներ ներկայացնել և խիստ հազվադեպ են օգտվում բողոքարկման այնպիսի անկախ մեխանիզմներից, ինչպիսիք են Մարդու իրավունքների պաշտպանը և դատարանները: Հանձնակատարը կոչ է անում հայաստանյան իշխանություններին և զինվորական ղեկավարությանը՝ ապահովելու բողոքարկման անկախ մեխանիզմների (որոնք դուրս են բանակի հիերարխիայից և կառույցներից)

63 Արայիկ Զալյանի գանգատն ընդդեմ Հայաստանի (թիվ 36894/04)՝ ներկայացված 2004 թվականի սեպտեմբերի 23-ին, ինչպես նաև՝ Ռազմիկ Սարգսյանի և Մուսա Սերոբյանի գանգատն ընդդեմ Հայաստանի (թիվ 352107)՝ ներկայացված 2006 թվականի նոյեմբերի 9-ին:

հասանելիությունն առանց որևէ խոչընդոտի՝ չվախենալով բոլոր ներկայացնողների նկատմամբ վրեժխնդրությունից:

139. Հանձնակատարը քաջալերում է հայաստանյան իշխանություններին՝ մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համահունչ փոփոխելու բանակի կարգապահական կանոնակարգերը: Մասնավորապես, Հանձնակատարը ցանկանում է ընդգծել, որ կարգապահական կանոնների խախտման վերաբերյալ ցանկացած բողոք պետք է քննվի, և որ պետք է բացառվի կարգապահական տույժերի կամայական նշանակումը:

140. Հանձնակատարը ողջունում է պաշտպանության նախարարի և զինվորական դատախազի կողմից «թեժ գծերի» ստեղծումը, որոնց նպատակն է խրախուսել բանակին առնչվող հիմնախնդիրների թեմաներով ուղղակի շփումները բնակչության հետ: Առավել ընդհանուր գծերով, նա դրական է համարում այն հանգամանքը, որ Հայաստանում հանրային բանավեճի առարկա են բանակում մարդու իրավունքների խնդիրները, և որ համագործակցություն է ձևավորվել պաշտպանության նախարարության և այս ոլորտում գործող իրավապաշտպան կազմակերպությունների միջև (տես ստորև՝ 145-րդ պարբերությունը):

141. Հանձնակատարը գտնում է, որ հրատապ կարգով անհրաժեշտ է բարձրացնել հանրության վստահությունը բանակում բռնության դեպքերի քննությունների նկատմամբ: Պետք է վերացնել քննության նկատմամբ տուժողների և նրանց ընտանիքի անդամների արտահայտած դժգոհության պատճառները: Արդյունավետ քննության՝ ՄԻԵԴ-ի սահմանած սկզբունքներին համահունչ, քննող և դատական մարմինները պարտավոր են ապահովել տուժողների ներգրավումը՝ ապահովելով գանգատ ներկայացնողների մասնակցությունը քննությանը և գործի նյութերի լիակատար հասանելիությունը նրանց համար:

142. Հանձնակատարը քաջալերում է իշխանություններին՝ ըստ պատշաճի տեղեկություններ տրամադրել հանրությանը բանակում առկա բռնության դեպքերի, ներառյալ՝ ոչ մարտական իրավիճակներում մահվան դեպքերի վիճակագրության և դրանց բնույթի մասին: Դա կօգներ նվազեցնել անվստահությունը և կասկածներն այն առումով, որ սպանությունները թյուր կերպով ներկայացվում են որպես ինքնասպանության դրդելու դեպքեր:

143. Հանձնակատարն առաջարկում է հայաստանյան իշխանություններին լրացուցիչ թափ հաղորդել զորակոչիկների և սպաների շրջանում մարդու իրավունքների վերաբերյալ կրթությունը և վերապատրաստում իրականացնելու ջանքերին՝ նպատակ հետապնդելով կանխել խախտումները և քաջալերել բռնության դեպքում բողոքարկման մեխանիզմների օգտագործումը:

## 2. Բանակում մարդու իրավունքների իրավիճակի անկախ մոնիթորինգը քաղաքացիական հասարակության կողմից

144. «Զերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածով և քրեակատարողական օրենսգրքի 21-րդ հոդվածով նախատեսվում է պաշտպանության նախարարության ենթակայության ներքո գործող կառույցների հասարակական վերահսկողության մեխանիզմի ստեղծումը։

145. Արդեն մի քանի տարի է, ինչ իրավապաշտպանները և իրավապաշտպան ՀԿ-ներն աստիճանաբար կարողանում են մուտք գործել զինվորական կառույցներ և դիտարկումներ անցկացնել այնտեղ։ Դրա շնորհիվ հնարավոր է եղել հրապարակել բանակին առնչվող մարդու իրավունքների կոնկրետ խնդիրները գնահատող մի քանի զեկույց, ինչպես նաև՝ զգալիորեն նպաստել է այնպիսի հարցերի շուրջ հանրային բանավեճի ծավալմանը, որոնց վերաբերյալ խոսելը նախկինում «թաբու» է եղել։ Զինված ուժերում իրավախախտումների և մահվան դեպքերն այժմ քննարկվում են հրապարակայնորեն, այդ թվում՝ լրատվամիջոցներում, որոնք կարևոր դեր են կատարում կոնկրետ դեպքերի լուսաբանման գործում։

146. Այնուհանդերձ, բանակը շատ առումներով դեռևս փակ կառույց է։ ՀԿ-ներից մեկը մատնացույց արեց այն հանգամանքը, որ զինվորական ծառայությունից վերադարձող զորակոչիկները չեն ցանկանում խոսել իրենց՝ որպես զինվորների փորձառության մասին։ ՀԿ-ները նկատել են, որ բանակում մահվան և ծանր իրավախախտումների վիճակագրական տվյալների վերաբերյալ իրավասու մարմինների տրամադրած տեղեկությունները, ինչպես նաև՝ քննությունների արդյունքները, նախկինի պես անբավարար են։

147. Գոյություն ունեն մի քանի քաղաքացիական կառույցներ, որոնք այս կամ այն կերպ վերահսկողություն են իրականացնում զինված ուժերի նկատմամբ։ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի մեկ ներկայացուցիչ զբաղվում է բանակին առնչվող հիմնախնդիրներով։ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովը որոշակի դերակատարում ունի բանակին առնչվող զարգացումների և հիմնախնդիրների վերահսկման և քննարկման հարցում, սակայն հանձնաժողովի կողմից գործնական վերահսկողությունը դեռևս սահմանափակ է։ Պաշտպանության նախարարության իրավասության ներքո ստեղծված Հասարակական խորհուրդը, որը կազմված է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից, իրականացնում է պաշտպանական ոլորտի մոնիթորինգ։ Այնուհանդերձ, խորհուրդը հաշվետվություններ չի ներկայացնում հանրությանը։

148. Խոշտանգումների դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրության («OPCAT») ներքո ստեղծված Ազգային կանխարգելիչ մեխանիզմը, որը կազմված է «Օմբուդսման գումարած ՀԿ-ներ» մոդելով, իրավասու է իրականացնել պաշտպանության նախարարության իրավասության ներքո գտնվող ազատազրկման վայրերի մոնիթորինգ։ Կամընտիր արձանագրության մեխանիզմն ըստ երևույթին դեռևս լիարժեքորեն չի գործում։ Ավելին, այն սահմանափակված է ազատազրկման վայրերի մոնիթորինգով, մինչդեռ զինված ուժերում առկա են մարդու իրավունքների բազմաթիվ այլ հիմնախնդիրներ, որոնք նույնպես արժե ուսումնասիրել։

*Եզրակացություններ և առաջարկություններ*

149. Հանձնակատարը կարծում է, որ զինված ուժերում մարդու իրավունքների իրավիճակը դիտարկելու նպատակով հարկ է ստեղծել մարդու իրավունքների մոնիթորինգի անկախ մարմին՝ կազմված քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից, այդ թվում՝ փորձագետներից: Այս մեխանիզմը պետք է ի վիճակի լինի իրականացնել տարաբնույթ հիմնախնդիրների, օրինակ՝ արտականոնադրական հարաբերությունների և դաժան վերաբերմունքի, կոռուպցիայի, զորակոչի գործընթացի և այլ խնդիրների մոնիթորինգ:

150. Հայաստանյան իշխանությունները կարող են օգտագործել քրեակատարողական հիմնարկների և արդարադատության նախարարության մարմինների մոնիթորինգ իրականացնող հասարակական դիտորդների խմբի մոդելը, որը կազմված է մարդու իրավունքների մոնիթորինգի և քրեակատարողական համակարգին աջակցության ծրագրերի փորձ ունեցող՝ քաղաքացիական հասարակության անկախ սուբյեկտներից: Մոնիթորինգային խումբը, որը ստեղծվել է արդարադատության նախարարության համագործակցությամբ և միջազգային դերակատարների աջակցությամբ, ներկայացնում է հաշվետվություններ և առաջարկություններ՝ ուղղված քրեակատարողական համակարգում մարդու իրավունքների չափանիշների պահպանման մակարդակի բարելավմանը:

151. Հանձնակատարը միանշանակորեն կողմ է զինված ուժերում մարդու իրավունքների իրավիճակի բարելավման գործում Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի դերակատարման բարձրացմանը, մասնավորապես՝ զինծառայողների բողոքները ստանալու, զինվորական կյանքի տարբեր ոլորտների մոնիթորինգ իրականացնելու և իրավական և կառուցակարգային բարեփոխումներին մասնակցելու ճանապարհով:

152. Հանձնակատարը նաև համարում է, որ զինվորական դատախազը կարող է կարևոր դերակատարում ունենալ զինված ուժերում մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի մակարդակը բարձրացնելու գործում:

## 3. Խղճի հիման վրա զինվորական ծառայությունն առարկելու իրավունքը

153. Խղճի հիման վրա զինվորական ծառայությունն առարկելու իրավունքի խնդիրը Հայաստանում մինչ օրս լուծված չէ: Խղճի հիման վրա զինվորական ծառայությունն առարկելու հիմքով քաղաքացիական ծառայություն անցնելու մասին դիմողները հիմնականում Եհովայի վկաների համայնքի անդամներ են: Ավելի քան 70 անձ ներկայումս գտնվում է ազատազրկման վայրերում բանակում ծառայելուց և այլընտրանքային զինվորական ծառայություն կատարելուց հրաժարվելու համար: Խղճի հիման վրա զինվորական ծառայությունն առարկող բոլոր անձինք քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա դատապարտվել են 24-ից 36 ամիս ժամկետով ազատազրկման:

154. «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքն ընդունվել է 2003 թվականին և ուժի մեջ մտել 2004-ին: Այլընտրանքային ծառայության կատարումը նախկինի պես վերահսկվում է զինված ուժերի կողմից, որը լուրջ խոչընդոտ է Եհովայի վկաների համայնքի անդամների համար՝ հաշվի առնելով վերջիններիս կրոնական համոզմունքները: Հաջորդ խնդիրը քաղաքացիական ծառայության տևողության մեջ պատժիչ տարրի հնարավոր առկայությունն է, քանզի այն ներկայումս 42 ամիս է, մինչդեռ սովորական զինվորական ծառայության տևողությունը 24 ամիս է: Այս կապակցությամբ Եվրոպայի խորհրդի Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն եզրակացրել է, որ զինվորական ծառայության տևողությունը կրկնակի

անգամ գերազանցող՝ այլընտրանքային ծառայության տևողությունը չափազանց երկար է և հակասում է Եվրոպական սոցիալական խարտիայի 1-ին հոդվածի 2-րդ մասին: Վերջինս նախատեսում է, որ այլընտրանքային ծառայությունը չի կարող մեկ ու կես անգամից ավելի շատ գերազանցել զինված զինվորական ծառայության տևողությունը:[64]

155. Արթիկի բանտում Հանձնակատարը հանդիպեց Եհովայի վկաների համայնքի մեջ մտնող երեք անձանց, ովքեր խղճի հիման վրա առարկում էին զինվորական ծառայանը: Նրանք նշեցին, որ խղճի հիման վրա զինվորական ծառայանն առարկող անձանց նկատմամբ միևնույն հանցագործության համար նշանակվում են պատիժներ՝ ազատազրկման տարբեր ժամկետներով՝ կախված այն հանգամանքից, թե ով է գործը քննող դատավորը: Երիտասարդները նշեցին, որ իրենք պատրաստակամորեն կհամաձայնեն քաղաքացիական ծառայություն կատարել, եթե վերջինս չվերահսկվի բանակի կողմից: Բանտի պայմանների վերաբերյալ բողոքներ նրանք ըստ երևույթին չունեին՝ ասելով, թե աշխատողները և ազատազրկված այլ անձինք լավ են վերաբերվում իրենց: Երեք ազատազրկվածները նշեցին, որ խղճի հիման վրա զինվորական ծառայանն առարկող անձինք ստանում են զինվորական գրքույկ՝ ծառայության համար պիտանի չլինելու մասին նշագրումով:

156. Հանձնակատարի հետ հանդիպման ընթացքում պաշտպանության նախարարության պաշտոնյաները պատրաստակամություն հայտնեցին՝ փոփոխություններ կատարելու «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքում: Պաշտպանության նախարարը, մասնավորապես, նշեց, որ փոփոխությունների հիման վրա[65] վերահսկողությունը կիրականացվի այլընտրանքային ծառայության կազմակերպման հարցերով լիազորված համապատասխան նախարարության (աշխատանքի, առողջապահության, պաշտպանության և այլն) կողմից՝ այդկերպ ակնարկելով, որ առկա է լինելու իր բնույթով իսկապես քաղաքացիական ծառայություն: «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը կառավարության կողմից հաստատվեց 2011 թվականի ապրիլին:

*Եզրակացություններ և առաջարկություններ*

157. Հանձնակատարը կոչ է անում հայաստանյան իշխանություններին ազատ արձակել զինվորական ծառայություն չկատարելու հիմքով ներկայումս բանտում պահվող բոլոր այն անձանց, ովքեր խղճի հիման վրա առարկում են զինվորական ծառայանը: Նշված դեպքերի համար անհրաժեշտ է գտնել ազատազրկման այլընտրանքներ:

158. Հանձնակատարը գտնում է, որ հրատապ կարգով անհրաժեշտ է վերանայել «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքը և Հայաստանում ձևավորել իր բնույթով իսկապես քաղաքացիական ծառայության հնարավորություն ստեղծելու համար անհրաժեշտ պատշաճ մեխանիզմներ: Կարևոր է նաև զինվորական ծառայության տևողությունը հաշվի առնելով ճշգրտել այլընտրանքային ծառայության տևողությունը՝ այնպես, որպեսզի վերջինս չընկալվի որպես պատժի, խափանման կամ խտրականության դրսևորում:

---

[64] Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե, եզրակացություն XIX – 1 (ՀՈՒՆԱՍՏԱՆ), Խարտիայի 1-ին, 9-րդ, 10-րդ, 15-րդ և 18-րդ հոդվածներ, ինչպես նաև՝ 1988 թվականի լրացուցիչ արձանագրության 1-ին հոդված, 2008 թվականի նոյեմբեր:

[65] Սույն զեկույցը գրելու ժամանակ փոփոխությունների նախագիծը դեռևս չէր հրապարակվել:

**Appendix**

# Comments of the Government of Armenia regarding the report of the Commissioner for Human Rights following his visit to Armenia from 18 to 21 January 2011

***5 May, 2011***

## Introduction

The Government of Armenia is a consistent supporter of the independent and impartial mandate of the Commissioner of Human Right and welcomes the on-going dialogue with him. The recent visit of the Commissioner to Armenia in January 2011 played an important role for the co-operation with his Office. While the promotion and protection of human rights is the sole responsibility of the authorities of Armenia, in engaging in the dialogue with the Commissioner the Armenian Government is guided by the principles of openness and pragmatic dialogue to address issues within the competence of the mandate of the Commissioner and to benefit from the advise and assistance of the Council of Europe.

In light of the above considerations the Government has carefully examined the report of the Commissioner following his visit to Armenia. While there are numerous aspects of the report, which constitute valuable advice for the authorities, there are at the same time contestable views expressed, which undermine the depth of his analyses and usefulness of his advice. Certain aspects of the report by their nature address issues within the confines of Armenia's domestic politics and, therefore, should have been treated with greater care for balance and impartiality in order to demonstrate sufficient sensitivity to the competitive nature of Armenia's domestic politics. The Commissioner should take every effort to desist from providing impression about a selective approach to the positions of the diverse political forces in Armenia and reliance on allegations. Certain parts of the report contain factual flaws and subsequent conclusions, which apparently stem from one-sided and partial information obtained by the Commissioner.

Below are the detailed responses of the Government in respect of the report.

## I. Human rights issues related to the March 2008 events

### 1. Persons deprived of their liberty

1. It is first of all the primary interest and responsibility of the authorities of Armenia to take every effort in overcoming the consequences of the tragic events of 1-2 March. With this consideration in mind the President and the National Assembly have been continuously and extensively applying all available provisions and instruments prescribed by law to release persons imprisoned in connection with the events. In doing so, the authorities strictly adhere to the principles of the rule of law, as well as to the respect of the national legal system and its integrity. The three persons, who remain imprisoned in connection with the March 2008 events, namely, Mr. Sasoun Mikaelyan, Mr. Nikol Pashinyan and Mr. Ara Hovhannisyan, have been recognised by the Courts of Armenia as having committed particularly grave acts of violence and incitement to it. They have already been subject to amnesty declared by the National Assembly in June 2009, as a result of which their term in prison has already been reduced. The President of Armenia on numerous occasions declared his commitment to apply the remaining legal instrument available to him related to the granting of pardon. However, legal procedure must be followed and respected in this regard. The Commissioner has been briefed in detail about this position.

2. The judicial system of Armenia is subject to on-going comprehensive reform, which is a political priority for the authorities. At the same time, deficiencies in the judicial system do not absolve any person from legal responsibility for their actions and cannot justify selective exercise of justice.

Allegations concerning the initiation of charges and judicial procedure on the basis of the political views of the persons concerned are groundless and lack sufficient understanding of the political realities in Armenia. It is a demonstration of a failure to denote the highly competitive, diverse and considerably vibrant political environment in the country, as well as to distinguish between a strictly legal process on the one hand and exercise of political activity on the other.

## 2. Investigation into deaths

3. The Commissioner has been briefed in detail about the on-going investigation into the 10 deaths during the events of March 2008. Value judgments about the lack of professionalism of the investigation process represent a serious deficiency of the report. Initiation of criminal charges against suspected persons in connection with the deaths may only be based on credible legal grounds. The fact that the investigation into the 10 deaths has never been closed and is an on-going process has been clearly brought to the attention of the Commissioner. Ballistic investigation of all weaponry available in the national registry has been carried out with great care. The Commissioner has been briefed in detail about the on-going actions of the investigation unit to this end.

4. Investigation of command responsibility of the police during the events of March 2008 has also been carried out. This issue has been considered most seriously. The Commissioner has been informed that while there are no legal grounds to initiate criminal charges in this respect, extensive administrative actions have been taken with respect to the high command of the Police immediately in the aftermath of the events, including the discharging of the Head of the Police and other senior officers.

5. Achieving credible progress in the investigation into the ten deaths has been and remains important political priority for the authorities. There is no second thought about the primary interest and responsibility of the President and the Government to credibly close this tragic chapter of Armenia’s history and to draw lessons from it, in light of which on 20 April 2011 the President of Armenia declared publicly and in most unambiguous terms his strong urge to the relevant bodies to step up every action in the investigation process. The Special Investigative Service of Armenia, tasked with the investigation of the events has undertaken a comprehensive review of the investigation process and appealed to the public to come forward with any information relevant to the investigation to assist the process with the full guarantee of confidentiality or protection if and when required.

6. Last, but not least, the ten deaths has been a tragedy that spares no one. The grief of the bereaved families is shared unreservedly by the authorities. This fact underlines the determination of the President and the Government to complete successfully and credibly the investigation.

7. The Armenian legislation prescribes limitations to access to information and materials related to pre-trial investigation of cases. However, given the special circumstance of significance and strong public interest to this particular investigation process in relation to the events of March 2008, the Special Investigation Service has consistently provided information to the public to the extent that it does not undermine progress in the investigation. All relevant information has been regularly updated on the official websites of the Office of the Prosecutor General and made available on regular basis through the media. The Human Rights Defender and his office, non-governmental organisations, as well as international organisations, have been regularly briefed about the process. Furthermore, all information and materials related to the investigation of the 10 deaths have been made fully available to the National Assembly ad hoc committee to conduct an inquiry into the events of 1 March 2008 and the reasons thereof, as well as to the Group of independent experts. In light of the comprehensive review of the investigation process, as mentioned above, the adopted policy of information sharing with the public will be strictly maintained.

8. The Armenian legislation contains specific provisions related to adequate compensation to the families of the victims. This issue is by no means overlooked by the authorities. The identification of persons directly guilty of the deaths as a result of the investigation will in turn ensue the consideration of the issue of compensations. At the same time, the authorities are fully mindful of the fact that the successful completion of the investigation and identification of persons directly responsible for the deaths will be the most important contribution to alleviating the plight of the bereaved families.

9. The Government has condemned in strongest terms the actions of Police officers, whose criminal actions led to the suicide of Mr. Vahan Khalafyan, and followed closely the investigation of this case. The investigation and the subsequent judicial process have been carried out in a most comprehensive and professional manner. Charges were brought against the Head of the Criminal Investigation Department at the Charentsavan district division of the Police, who has abused his powers and resorted to violence in order to extort confession of guilt for alleged robbery from Mr. Khalafyan. In a state of extreme tension Mr. Khalafyan has committed suicide. Charges have been brought against three other officers of the same department for complicity in the criminal acts of their fellow officer. All officers have been sentenced by the Court and are presently serving prison terms. Both during the pre-trial investigation and the Court proceedings the claims of intentional murder of Mr. Khalafyan have not been substantiated with sufficient evidence. At the same time, as it stands, this deplorable incident at the Police is a disgrace for the reputation of the Police and is addressed by the Government in a most serious manner.

## 3. Follow-up to recommendations made by the parliamentary inquiry committee

